

Հավելված _____

ՀՀ կրթության և գիտության նախարարի
20__թ. _____ -ի N ____-Ն հրամանի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Պետական գրանցման No _____

«_____» _____ 20__թ.

ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՋԵՍՏԱՎՈՐԾԱԿԱՆ)
ԿՐԹՈՒԹՅԱՆ

ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉ

(ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉ)

Որակավորումը՝ ԳՅՈՒԴԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ ՎԵՐ
ԱՆՈՐՈԳՈՂ ՓԱԿԱՆԱԳՈՐԾ

Որակավորման աստիճանը՝ ԱՐՋԵՍՏԱՎՈՐ

Մասնագիտությունը՝ 3601-Գյուղատնտեսական աշխատանքների տեխնիկական ապահովում

Ուժի մեջ է մտնում՝ «_____» _____ 20__թ.

Երևան 20__թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ.....	4
1.1. Որակավորման անվանումը	4
1.2. Որակավորման աստիճանը	4
1.3. Որակավորման տարակարգը	4
1.4. Մասնագիտությունը	4
1.5. Արժեքը	4
1.6. Ուսումնառության նորմատիվային ժամկետը	4
1.7. Կրթության ձևը.....	4
1.8. Որակավորման բնութագիրը	4
1.8.1. Ջրաղմունքը.....	4
1.8.2. Մասնագիտական գործունեության բնագավառները՝ ըստ ՀՀ տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի՝	4
1.8.3. Մասնագիտական գործունեության օբյեկտները.....	4
1.8.4. Մասնագիտական գործունեության տեսակները.....	5
1.8.5. Մասնագիտական գործունեության պարտականությունները.....	5
1.8.6. Որակավորմանը ներկայացվող ընդհանուր պահանջները.....	5
2. ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ՀԵՏԱԳԱ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	6
3. ՄԱՍՆԱԳԵՏԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՅՎՈՂ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ	6
4. ՊԱՀԱՆՋՆԵՐ ՄԱՍՆԱԳԵՏԻ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ	7
4.1. ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական, մաթեմատիկական և ընդհանուր բնագիտական գիտելիքները	7
4.1.1. ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական գիտելիքների բնագավառում՝	7
4.1.2. մաթեմատիկական և ընդհանուր բնագիտական գիտելիքների բնագավառում՝	7
4.1.3. Ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական, մաթեմատիկական և ընդհանուր բնագիտական առարկաների ծրագրերի նվազագույնին ներկայացվող պահանջները.....	7
4.2. Առանցքային հմտությունները	7
4.3. Կարողությունները	8
4.3.1 ՄՈԴՈՒԼ 1. «ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ».....	8
4.3.2 ՄՈԴՈՒԼ 2. «ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐ».....	12
4.3.3 ՄՈԴՈՒԼ 3. «ՃԱՐՏԱՐԱԳԻՏԱԿԱՆ ԳՐԱՖԻԿԱ».....	15
4.3.4 ՄՈԴՈՒԼ 4. «ՆՅՈՒԹԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ».....	18
4.3.5 ՄՈԴՈՒԼ 5. «ՏՐԱԿՏՈՐՆԵՐ».....	20
4.3.6 ՄՈԴՈՒԼ 6. «ՏՐԱԿՏՈՐԻ ՇԱՐԺՉԻ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ»	23
4.3.7 ՄՈԴՈՒԼ 7. «ՏՐԱԿՏՈՐՆԵՐԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՄԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ».....	28
4.3.8 ՄՈԴՈՒԼ 8. «ՏՐԱԿՏՈՐՆԵՐԻ ՈՒԺՄՅԻՆ ՓՈԽԱՆՑՈՒՄԸ»	33
4.3.9 ՄՈԴՈՒԼ 9. «ՏՐԱԿՏՈՐՆԵՐԻ ԸՆԹԱՑՔԱՅԻՆ ՄԱՍԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ».....	35
4.3.10 ՄՈԴՈՒԼ 10. «ՏՐԱԿՏՈՐՆԵՐԻ ՕԺԱՆԴԱԿ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ ԵՎ ՄԱՐՔԵՐԸ»	37
4.3.11 ՄՈԴՈՒԼ 11. «ՀՈՂԱՄՇԱԿՄԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐ»	39

4.3.12	ՄՈՂՈՒԼ 12. «ՑԱՆԻՉ ԵՎ ՏՆԿԻՉ ՄԵՔԵՆԱՆԵՐ, ՊԱՐԱՐՏԱՑՄԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐ»	42
4.3.13	ՄՈՂՈՒԼ 13. «ԲՈՒՅՍԵՐԻ ՔԻՄԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐ»	45
4.3.14	ՄՈՂՈՒԼ 14. «ԲԵՐՔԱՀԱՎԱՔԻ ԵՎ ԿԵՐԵՐԻ ԿՈՒՏԱԿՄԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐ».....	47
4.3.15	ՄՈՂՈՒԼ 15. «ՏՐԱԿՏՈՐՆԵՐԻ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄԸ»	50
4.3.16	ՄՈՂՈՒԼ 16. «ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ».....	52
4.3.17	ՄՈՂՈՒԼ 17. «ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԱՆՍԱՐՔՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ».....	55
4.3.18	ՄՈՂՈՒԼ 18. «ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՆՈՐՈԳՄԱՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ»	58
4.3.19	ՄՈՂՈՒԼ 19. «ՄԵՏԱԳԻ ՀԱՏՈՒՄԸ, ՀԱՐԹՈՒՄԸ ԵՎ ԾՈՌՈՒՄԸ, ԿՏՐՈՒՄԸ, ԽԱՐՏՈՑՈՒՄԸ».	62
4.3.20	ՄՈՂՈՒԼ 20. «ԳԱՅԼԻԿՆՈՒՄ, ԵԶՐԱԼԱՅՆՈՒՄ ԵՎ ԱՆՅԶԱԿՆՈՒՄ».....	67
4.3.21	ՄՈՂՈՒԼ 21. «ՊԱՐՈՒՐԱԿՈՒՄ, ԳԱՄՈՒՄ»	71
4.3.22	ՄՈՂՈՒԼ 22. «ՆԵՐԽԱՐՏՈՑՈՒՄ ԵՎ ՀԱՐՄԱՐԱԿՅՈՒՄ, ՔԵՐԱՆՈՒՄ, ԿԻՊԱՀՂԿՈՒՄ».....	74
4.3.23	ՄՈՂՈՒԼ 23. «ՆԵՐՔԻՆ ԱՅՐՄԱՆ ՇԱՐԺԻՉՆԵՐԻ ՆՈՐՈԳՄԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ».....	78
4.3.24	ՄՈՂՈՒԼ 24. «ՏՐԱԿՏՈՐՆԵՐԻ ՏՐԱՆՍՄԻՍԻԱՅԻ, ԸՆԹԱՑՔԱՅԻՆ ՄԱՍԻ ԵՎ ԴԵԿԱՎԱՐՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ՆՈՐՈԳՄԱՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՊՐՈՑԵՍԸ».....	84
4.3.25	ՄՈՂՈՒԼ 25. «ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՆՈՐՈԳՄԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ»	89
4.3.26	ՄՈՂՈՒԼ 26. «ՏԻՊԱՅԻՆ ՄԻԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՄԵՔԵՆԱՄԱՍԵՐԻ ՆՈՐՈԳՈՒՄ»	95
4.3.27	ՄՈՂՈՒԼ 27 «ԱՌԱՋԻՆ ԲՈՒԺՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ».....	97
4.3.28	ՄՈՂՈՒԼ 28. «ՄԵՏԱՂԱՄՇԱԿՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ» (ՆԱԽԱՍԻՐԱԿԱՆ).....	99
4.3.29	ՄՈՂՈՒԼ 29. «ԹՈՒՅԼՏՎԱԾՔՆԵՐ ԵՎ ՆՍՏԵՑՎԱԾՔՆԵՐ, ՉԱՓԻՉ ԳՈՐԾԻՔՆԵՐ ԵՎ ՉԱՓՈՒՄՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱՆ» (ՆԱԽԱՍԻՐԱԿԱՆ).....	102
4.3.30	ՄՈՂՈՒԼ 30. «ԱՆԱԳՈՒՄ, ԶՈՂՈՒՄ ԵՎ ԱՌԱՆՅԶԱԿԱԼՆԵՐԻ ԼՅՈՒՄ» (ՆԱԽԱՍԻՐԱԿԱՆ).	106
4.3.31	ՄՈՂՈՒԼ 31. «ՄԱՇՎԱԾ ՄԵՔԵՆԱՄԱՍԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ» (ՆԱԽԱՍԻՐԱԿԱՆ)	109
5.	ՊԱՀԱՆՋՆԵՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՈՒ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՆԿԱՏՄԱՍԲ	114
5.1.	Ընդհանուր դրույթներ	114
5.2.	Ընդունելության գործընթացի կազմակերպման պայմաններ	114
5.3.	Ուսումնական գործընթացի կազմակերպման պայմաններ	114
5.3.1.	Կադրային ապահովություն և կադրային համապատասխանություն	114
5.3.2.	Ուսումնամեթոդական ապահովություն.....	115
5.3.3.	Նյութատեխնիկական ապահովություն (կաքինետների, լաբորատորիաների, արհեստանոցների, ուսումնական, ուսումնաօժանդակ և օժանդակ ստորաբաժանումների, նյութերի ու պարագաների երաշխավորված ցանկ)	115
5.3.4.	Ուսումնական գործընթացի կազմակերպման ընդհանուր նորմատիվներ.....	116
	(ուսումնական պլան)	116
5.4.	Պրակտիկաների կազմակերպման պահանջներ	117
5.5.	Միջանկյալ և ամփոփիչ ատեստավորման պահանջներ	118
6.	ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԳԵՄԻԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՉԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ	118

1. ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

- 1.1. 3106 - «Գյուղատնտեսական մեքենաներ և սարքավորումներ վերանորոգող փականագործ» որակավորումը հաստատված է Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. հունվարի 12-ի N 73-Ն որոշմամբ:
- 1.2. Որակավորման աստիճանը՝ Արհեստավոր:
- 1.3. Որակավորման տարակարգը՝ 3-4
- 1.4. Մասնագիտությունը՝ 3601 - «Գյուղատնտեսական աշխատանքների տեխնիկական ապահովում»:
- 1.5. Արժեքը՝ - - - - ¹
- 1.6. Ուսումնառության նորմատիվային² ժամկետը՝ 1 տարի
- 1.7. Կրթության ձևը՝ առկա (ցերեկային):
- 1.8. Որակավորման բնութագիրը
- 1.8.1. Չբաղմունքը.
«Գյուղատնտեսական մեքենաներ և սարքավորումներ վերանորոգող փականագործ» արհեստավորը կարող է իրականացնել հետևյալ զբաղմունքը՝ ըստ ՀՀ Չբաղմունքների դասակարգչի՝
- 7231 «Մոտոտրանսպորտային միջոցների փականագործ-հավաքողներ և փականագործ-նորոգողներ»*
- 1.8.2. Մասնագիտական գործունեության բնագավառները՝ ըստ ՀՀ տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի՝
- 29.31.9 Գյուղատնտեսական տրակտորների նորոգում
- 29.32.9 Գյուղատնտեսության մեջ օգտագործվող մեքենաների և սարքավորանքի նորոգում
- 1.8.3. Մասնագիտական գործունեության օբյեկտները³.
- - - - -

¹ Կլրացվի կրեդիտային համակարգով ուսուցման անցնելու դեպքում:

² միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության հիմքով:

³ Կլրացվի ՀՀ Չբաղմունքների դասակարգչի համապատասխան զբաղմունքի պարզաբանումները ընդունուլ հետո:

1.8.4. Մասնագիտական գործունեության տեսակները⁴.

1.8.5. Մասնագիտական գործունեության պարտականությունները⁵.

- Կատարել տրակտորի, դրա առանձին հանգույցների տեխնիկական սպասարկման, նորոգման և կարգավորումների աշխատանքներ.
- Կատարել տրակտորի տեխնիկական արատորոշում.
- Ապահովել կենսագործունեության անվտանգության և բնության պահպանության կանոնները.

1.8.6. Որակավորմանը ներկայացվող ընդհանուր պահանջները

Պահանջվում են լայն, ընդհանուր գիտելիքներ, տվյալ ոլորտին հատուկ գործնական և տարրական տեսական գիտելիքներ, ինչպես նաև ուղղորդման մեքենա խնդիրներ իրականացնելու ունակություն: Սովորողները պատասխանատվություն են կրում իրենց ուսումնառության համար և ունեն գործնական սահմանափակ փորձ աշխատանքի կամ ուսումնառության որևէ առանձին ոլորտում:

Հմտությունները

Օգտագործել տվյալ բնագավառին վերաբերող խնդիրներ լուծելու մի շարք հմտություններ և ցուցաբերել սեփական մեկնաբանությունը մեքենաների, գործիքների և նյութերի ընտրության և հարմարեցման միջոցով: Գնահատել տարբեր մոտեցումները խնդիրներին:

Անձնական և մասնագիտական կարողություններ

(ա) Ինքնուրույնություն և պատասխանատվություն

Ստանձնել խնդիրների լուծման պատասխանատվություն և ցուցաբերել որոշ ինքնուրույնություն աշխատանքային դերում կամ ուսումնառության մեջ՝ հիմնականում կայուն, սակայն որոշ փոփոխական գործոններով միջավայրում:

(բ) Ուսումնառելու կարողություն

Պատասխանատվություն կրել սեփական ուսումնառության համար:

(գ) Հաղորդակցման և սոցիալական կարողություն

Իրականացնել գրավոր և բանավոր հաղորդակցում և արձագանքել այդպիսի հաղորդակցմանը: Պատասխանատվություն ստանձնել սեփական անձն ընկալելու (ինքնաճանաչման) և սեփական վարքագծի համար:

(դ) Մասնագիտական և զբաղմունքի (աշխատանքային) կարողություն

Լուծել խնդիրներ՝ օգտագործելով տեղեկատվության հանրահայտ աղբյուրները, հաշվի առնելով որոշ սոցիալական հարցեր:

⁴ Կլրացվի ԶԶ Ձբաղմունքների դասակարգչի համապատասխան զբաղմունքի պարզաբանումները ընդունուլ հետո:
⁵ այս կետը կհանվի 1.8. 3 և 1.8.4 կետերը լրացնելուց հետո:

2. ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ՀԵՏԱԳԱ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության հիմնական կրթական ծրագիրը յուրացրած շրջանավարտը՝ արհեստավորը, հնարավորություն ունի՝

- շարունակել և յուրացնել միջին մասնագիտական կրթության հիմնական և լրացուցիչ կրթության ծրագրերը,
- ն ույն կամ հարակից մասնագիտությամբ միջին մասնագիտական կրթություն ստանալ կրճատված ժամկետներում,
- շարունակել և յուրացնել բարձրագույն կրթության հիմնական և լրացուցիչ կրթական ծրագրերը՝ սահմանված կարգով:

3. ՍԱՄՆԱԳԵՏԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

3.1. «Գյուղատնտեսական մեքենաներ և սարքավորումներ վերանորոգող փականագործ» որակավորմամբ մասնագետի պատրաստման հիմնական կրթական ծրագիրը մշակվում է սույն պետական կրթական չափորոշիչի պահանջներին համապատասխան և ներառում է մասնագիտության ուսումնական պլանը, ուսումնական դասընթացների և պրակտիկաների ծրագրերը:

3.2. «Գյուղատնտեսական մեքենաներ և սարքավորումներ վերանորոգող փականագործ» որակավորմամբ մասնագետի պատրաստման հիմնական կրթական ծրագրի բովանդակության պարտադիր նվազագույնի իրականացման պայմաններին և ուսումնառության ժամկետներին ներկայացվող պահանջները կանոնակարգվում են սույն պետական կրթական չափորոշիչով:

3.3. «Գյուղատնտեսական մեքենաներ և սարքավորումներ վերանորոգող փականագործ» որակավորմամբ մասնագետի պատրաստման հիմնական կրթական ծրագիրը պետք է ներառի պարտադիր դասընթացներ՝ այդ թվում հաստատության առաջարկությամբ, ուսանողի ընտրությամբ առարկաներ և նախասիրական (ֆակուլտատիվ) դասընթացներ:

Ուսանողի կողմից ընտրովի դասընթացները յուրաքանչյուր կրթաբլոկում (առարկայախմբում) իրենց բովանդակությամբ պետք է լրացնեն տվյալ կրթաբլոկում նշված դասընթացները:

4. ՊԱՀԱՆՋՆԵՐ ՄԱՍՆԱԳԵՏԻ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ՆԿԱՏԱՍՐ

4.1. ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական, մաթեմատիկական և ընդհանուր բնագիտական գիտելիքները

4.1.1. ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական գիտելիքների բնագավառում՝

- իմանա ՀՀ Սահմանադրության և իր բնագավառի օրենքները,
- ազատ տիրապետի մասնագիտական հայոց լեզվին (գրավոր և բանավոր) և հաղորդակցվի՝ առնվազն մեկ օտար լեզուներով,
- ունենա պատկերացում առողջ կենսակերպի մասին, տիրապետի ֆիզիկական կատարելագործման ունակություններին և հմտություններին,
- ծանոթ լինի համաշխարհային մշակույթին, տիրապետի վարվելաձևի կուլտուրային, իմանա դրա էթիկական և իրավական նորմերը, որոնք կարգավորում են մարդու և հասարակության, մարդու և շրջակա միջավայրի հարաբերությունները:

4.1.2. մաթեմատիկական և ընդհանուր բնագիտական գիտելիքների բնագավառում՝

- ծանոթ լինի ժամանակակից բնագիտության հիմնական սկզբունքներին և հայեցակարգերին, բնապահպանական գոբալ և տարածքային հիմնախնդիրներին,
- տիրապետի տեղեկատվության հավաքման, պահպանման և մշակման համակարգչային մեթոդներին և կարողանա օգտագործել ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներ:

4.1.3. Ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական, մաթեմատիկական և ընդհանուր բնագիտական առարկաների ծրագրերի նվազագույնին ներկայացվող պահանջները
270 ժամ

(կլրացվի վերոնշյալ առարկաների երաշխավորված ցանկն ընդունելու հետո)

4.2. Առանցքային հմտությունները

- 4.2.1. Թվերի կիրառում
- 4.2.2. Հաղորդակցություն
- 4.2.3. Տեղեկատվական տեխնոլոգիաներ
- 4.2.4. Խնդիրների լուծում
- 4.2.5. Անձնական ուսումնառություն և կատարողականության բարելավում
- 4.2.6. Թիմային աշխատանք
- 4.2.7. Ձեռներեցություն
- 4.2.8. Անվտանգություն և առաջին բուժօգնություն

4.3. Կարողությունները

4.3.1 ՍՈՂՈՒՆ 1. «ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ»

Մոդուլի դասիչը՝

ԸԱ1-07-001

Մոդուլի նպատակը՝

Մոլորողի մոտ ձևավորել ցանկացած բնագավառում անհրաժեշտ աշխատանքային կուլտուրա և էթիկա, տալ իմացություն աշխատանքային գործունեության ընթացքում հաջողության հասնելու նախապայմանների մասին, ինչպես նաև ղեկավարի և գործընկերների հետ արդյունավետ հարաբերվելու կարողություններ:

Մոդուլի մակարդակը՝

1-ին

Մոդուլի տևողությունը՝

46 ժամ դասախոսություն

26 ժամ գործնական պարապմունքներ

Մոդուլի կրեդիտային արժեքը՝

« 2 »

Մուտքային պահանջները՝

Չկան

Հատուկ պահանջներ՝

Այս մոդուլի ուսումնասիրման շրջանակը սահմանվում է սույն չափորոշիչի 1.8.6 կետի պահանջներով:

Ուսումնառության արդյունքները՝

Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝

1. **տիրապետի աշխատանքի տեղավորվելու կարողությունների.**
2. **դրսևորի անհրաժեշտ վերաբերմունք աշխատանքի և աշխատավայրի նկատմամբ.**
3. **տիրապետի աշխատանքի կուլտուրային և էթիկային.**
4. **իմանա աշխատանքում հաջողության հասնելու նախապայմանները և պատշաճ հարաբերվի ղեկավարի հետ.**
5. **արդյունավետ աշխատի թիմում:**

Գնահատման կարգը՝

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

Կատարողականության չափանիշները, գնահատման միջոցները, մեթոդաբանությունը և ռեսուրսները, երաշխավորված ժամաքանակը՝ ըստ մոդուլի ուսումնառության արդյունքների.

ԱՐԳՅՈՒՆՔ 1. Տիրապետել աշխատանքի տեղավորվելու կարողությունների

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

- ա. ճիշտ է շարադրում գործող աշխատանքային օրենսգրքի անհրաժեշտ դրույթները.
- բ. ճիշտ է ներկայացնում աշխատանքի ընդունվելու և դրանից ազատվելու համար անհրաժեշտ բոլոր գործընթացները.
- գ. ճիշտ է կազմում գրավոր ինքնակենսագրություն (CV).
- դ. ճիշտ և մանրամասն բանավոր ներկայացնում է իր կենսագրությունը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՅԸ՝

Ուսանողին կտրվեն կոնկրետ հարցեր ՀՀ աշխատանքային օրենսգրքի համապատասխան դրույթներից: Ուսանողից կպահանջվի կազմել ինքնակենսագրություն (CV) և լրացնել աշխատանքային թերթիկի, աշխատանքի ընդունման ու դրանից ազատման դիմումի ձևեր:

Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Կազմակերպվում են դերային խաղեր: Կիրառվում են ձևաթղթեր, ձևաչափեր, այլ դիտակտիկ նյութեր:

ՈՒՍՈՒՅՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱԷԱՆԱԿ

Դասախոսություն՝	10 ժամ
Գործնական պարապմունքներ՝	6 ժամ

ԱՐԳՅՈՒՆՔ 2. Դրսևորել անհրաժեշտ վերաբերմունք աշխատանքի և աշխատավայրի նկատմամբ:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

- ա. ճիշտ է ներկայացնում աշխատանքի և շրջապատի նկատմամբ դրական տրամադրվելու կարողությունները.
- բ. ճիշտ է ներկայացնում գործերընկերների նկատմամբ հարգալից վերաբերմունքի և արդյունավետորեն հարաբերվելու օրինակներ.
- գ. առաջադրված իրավիճակում ցուցաբերում է պատասխանատվության զգացման դրսևորումներ.
- դ. ցուցաբերում է գործընկերոջը և ղեկավարին ուշադիր լսելու և հասկանալու դրսևորումներ:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՅԸ՝

Ուսանողին կներկայացվի համապատասխան աշխատանքային իրավիճակ (օրինակ), կպահանջվի ներկայացնել իր վերաբերմունքը դրա նկատմամբ, առաջարկել լուծումների տարբերակներ: Կտրվեն ուշիմության, ընկալունակության և տրամաբանելու կարողությունների բացահայտմանն ուղղված թեստային հարցեր: Կարող են կիրառվել ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր թեստեր:

Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Կազմակերպվում են իրավիճակային և դերային խաղեր՝ առավելագույնս նմանեցված աշխատանքային իրավիճակին:

ՈՒՍՈՒՅՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Դասախոսություն	10 ժամ
Գործնական պարապմունքներ	6 ժամ

ԱՐԳՅՈՒՆՔ 3. Տիրապետել աշխատանքի կուլտուրային և էթիկային

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

- ա. ճիշտ է ներկայացնում կազմակերպության նպատակները, արժեքները և այդտեղ կիրառվող ընդհանուր աշխատանքային մեթոդները, աշխատանքային և միջանձնային հարաբերությունները.
- բ. ճիշտ վերաբերմունք է դրսևորում և հարգալից է կոնֆլիկտային գործընկերների նկատմամբ.
- գ. առաջարկում է խնդրի ճիշտ լուծումներ առաջադրված պրոբլեմային իրավիճակում:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Ուսանողից կպահանջվի ներկայացնել պայմանական կազմակերպության նպատակները, արժեքները և կիրառվող ընդհանուր աշխատանքային մեթոդները, աշխատանքային և միջանձնային հարաբերությունները: Ուսանողին կառաջադրվի պրոբլեմային աշխատանքային իրավիճակ և կպահանջվի առաջարկել լուծումների տարբերակներ:

Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒՅԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Կազմակերպվում են իրավիճակային և դերային խաղեր՝ առավելագույնս նմանացված աշխատանքային իրավիճակին:

ՈՒՍՈՒՅՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Դասախոսություն՝	8 ժամ
Գործնական պարապմունքներ՝	4 ժամ

ԱՐԳՅՈՒՆՔ 4. Իմանալ աշխատանքում հաջողության հասնելու նախապայմանները և պատշաճ հարաբերվի ղեկավարի հետ:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

- ա. ճիշտ է բացատրում աշխատանքի հաճախման և ճշտապահության կարևորությունը.
- բ. ճիշտ է ներկայացնում ղեկավարի հետ հարաբերվելու ձևերը, իր և ղեկավարի իրավունքներն ու պարտականությունները.
- գ. ճիշտ է ներկայացնում աշխատանքի արդյունավետության ու որակի ապահովման ընդհանուր սկզբունքները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Ուսանողին կներկայացվի ղեկավարի հետ հարաբերակցվելու որևէ իրավիճակ և կպահանջվի ներկայացնել պահանջվող վարքագիծը: Կտրվեն հարցեր իր և ղեկավարի իրավունքների ու պարտականությունների մասին:

Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒՅԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Արդյունքի ուսուցանումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Կազմակերպվում են իրավիճակային և դերային խաղեր՝ առավելագույնս նմանացված աշխատանքային իրավիճակին:

ՈՒՍՈՒՅՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Դասախոսություն`	8 ժամ
Գործնական պարապմունքներ`	4 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 5. Արդյունավետ աշխատել թիմում:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ`

- ա. ճիշտ է ներկայացնում թիմային աշխատանքի հիմնական սկզբունքները.
- բ. ճիշտ է ներկայացնում թիմային խնդիրների լուծման մեթոդները,
- գ. թիմային աշխատանքի առաջադրված իրավիճակում դրևորում է անհրաժեշտ վարքագիծ` ցուցաբերելով փոխօգնություն, համբերատարություն, նվիրվածություն աշխատանքին և ընկերներին:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Սովորողին կտրվեն հարցեր թիմային աշխատանքի հիմնական սկզբունքների, թիմային խնդիրների լուծման մեթոդների վերաբերյալ: Մի խումբ ուսանողների կտրվի թիմով որևէ խնդիր լուծելու հանձնարարական, որի կատարման ընթացքում դիտման միջոցով կստուգվեն յուրաքանչյուր սովորողի` կատարման չափանիշներով սահմանված կարողությունների դրսևորումը:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒՅԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Կազմակերպվում են իրավիճակային և դերային խաղեր` առավելագույնս նմանացված աշխատանքային իրավիճակին:

ՈՒՍՈՒՅՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Դասախոսություն`	10 ժամ
Գործնական պարապմունքներ`	6 ժամ

4.3.2 ՄՈԴՈՒԼ 2. «ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐ»

Մոդուլի դասիչը՝

ԸԱ1-07-002

Մոդուլի նպատակը՝

Սովորողի մոտ ձևավորել ցանկացած բնագավառում առաջացած աշխատանքային խնդիրներն ընկալելու, հասկանալու և համապատասխան լուծումներ գտնելու կարողություններ:

Այս մոդուլը նախատեսված է ոչ միայն շարքային աշխատողի այլև դեկավար պաշտոններ զբաղեցնողների համար:

Մոդուլի մակարդակը՝

1-ին

Մոդուլի տևողությունը՝

24 ժամ դասախոսություն

12 ժամ գործնական պարապմունքներ

Մոդուլի կրեդիտային արժեքը՝

« 1 »

Մուտքային պահանջները՝

Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է անցած լինի «ԸԱ1-07-001-Ընդհանուր աշխատանքային հմտություններ» մոդուլը:

Հատուկ պահանջներ՝

Այս մոդուլի ուսումնասիրման շրջանակը սահմանվում է սույն չափորոշիչի 1.8.6 կետի պահանջներով:

Ուսումնառության արդյունքները՝

Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝

1. **կառավարի սթրեսը և ժամանակը.**
2. **դրսևորի քննադատական մտածողություն.**
3. **առաջացած պրոբլեմներին և կոնֆլիկտներին տա համապատասխան լուծումներ:**

Գ-նահատման կարգը՝

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

Կատարողականության չափանիշները, գնահատման միջոցները, մեթոդաբանությունը և ռեսուրսները, երաշխավորված ժամաքանակը՝ ըստ մոդուլի ուսումնառության արդյունանների.

ԱՐԳՅՈՒՆՔ 1. Կառավարել սթրեսը և ժամանակը:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

ա. ճիշտ է ներկայացնում սթրեսի կանխարգելման և անխուսափելի սթրեսին դիմակայելու մեթոդները.

բ. ճիշտ է կազմում իր աշխատաքնային պլանը (պայմանական աշխատանքային պլան).

գ. ճիշտ է ներկայացնում ժամանակի արդյունավետ օգտագործման միջոցները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Սովորողին կհանձնարարվի կազմել սահմանած ժամկետում որոշակի աշխատանք կատարելու գործողությունների պլան:

Կտրվեն մի շարք թեստային և հոգեբանական հարցեր, ինչպես նաև կառաջադրվեն աշխատանքային իրավիճակների օրինակներ՝ սրբեսի կանխարգելման և դիմակայման գիտելիքները ստուգելու նպատակով:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՇՄՈՒՐՄՆԵՐ

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Կազմակերպվում են իրավիճակային և դերային խաղեր՝ առավելագույնս նմանացված աշխատանքային իրավիճակին: Ուսուցման ընթացքում բերվում են իրական աշխատանքային փորձի օրինակներ:

ՈՒՍՈՒՅՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Դասախոսություն՝	8 ժամ
Գործնական պարապմունքներ՝	4 ժամ

ԱՐԳՅՈՒՆՔ 2. Դրսևորել քննադատական մտածողություն:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

- ա. ճիշտ է գնահատում տեղեկատվության հուսալիության և զգացմունքայնության աստիճանը.
- բ. ստացած տեղեկատվությունը ճիշտ և արդյունավետորեն համադրում է առկա գիտելիքների հետ.
- գ. իրականացնում է կառուցողական քննադատություն և ճիշտ է բացատրում կառուցողական քննադատության կարևորությունը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Ուսանողին կներկայացվի որոշակի իրավիճակ կամ խնդիր և կպահանջվի, որ նա իրականացնի տվյալ օրինակի առողջ և կառուցողական քննադատություն: Կտրվեն մի շարք թեստային և հոգեբանական հարցեր:

Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՇՄՈՒՐՄՆԵՐ

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Կազմակերպվում են իրավիճակային և դերային խաղեր՝ առավելագույնս նմանացված աշխատանքային իրավիճակին: Ուսուցման ընթացքում բերվում են իրական աշխատանքային փորձի օրինակներ:

ՈՒՍՈՒՅՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Դասախոսություն՝	8 ժամ
Գործնական պարապմունքներ՝	4 ժամ

ԱՐԳՅՈՒՆՔ 3. Լուծել պրոբլեմներ և կոնֆլիկտներ:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

- ա. բացահայտում է և ճիշտ է սահմանում պրոբլեմը տրված իրավիճակում,
- բ. ճիշտ է վերլուծում պրոբլեմը, տալիս է լուծման ճիշտ տարբերակ,
- գ. ճիշտ է գնահատում է արդյունքը.
- դ. բացահայտում է ցանկացած կոնֆլիկտի պատճառները.

ե. ճիշտ է ներկայացնում կոնֆլիկտի կանխարգելման եղանակները, կարողանում է տալ դրանց արագ ու արդյունավետ լուծումներ:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Ուսանողին կներկայացվի մի քանի պրոբլեմային և կոնֆլիկտային իրավիճակ՝ դրանց նախապայմաններով: Կպահանջվի, որ նա արագ կողմնորոշվի, ուսումնասիրի դրանց պատճառները, բացահայտի դրանք, առաջարկի կանխարգելիչ միջոցներ և տա արագ ու արդյունավետ լուծումներ: Կտրվեն մի շարք թեստային և հոգեբանական հարցեր:

Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

ՍԵԹՈՂԱԲԱՆՈՒՅԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Կազմակերպվում են իրավիճակային և դերային խաղեր՝ առավելագույնս նմանացված աշխատանքային իրավիճակին: Ուսուցման ընթացքում բերվում են իրական աշխատանքային փորձի օրինակներ:

ՈՒՍՈՒՅՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱԶԱՆԱԿ

Դասախոսություն՝	8 ժամ
Գործնական պարապմունքներ՝	4 ժամ

4.3.3 ՄՈԴՈՒԼ 3. «ՃԱՐՏԱՐԱԳԻՏԱԿԱՆ ԳՐԱՖԻԿԱ»

Մոդուլի դասիչը՝ **ԳՓ1-07-001**

Մոդուլի նպատակը՝

Այս մոդուլը նախատեսված է «Գյուղատնտեսական մեքենաներ և սարքավորումներ վերանորոգող փականագործ» արհեստավորի պատրաստման համար: Ավարտելով այս մոդուլը՝ սովորողը ձեռք կբերի տեխնիկական և մասնագիտական աշխատանքային գծագրեր կատարելու, կարդալու և հասկանալու անհրաժեշտ հմտություններ և կիրառական գիտելիքներ:

Մոդուլի մակարդակը՝ 1-ին

Մոդուլի տևողությունը՝ 54 ժամ գործնական պարապմունքներ

Մոդուլի կրեդիտային արժեքը՝ «1,5»

Մուտքային պահանջները

Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է լիարժեքորեն տիրապետի «Երկրաչափություն» առարկային՝ միջնակարգ դպրոցի ծրագրի ծավալով:

Հատուկ պահանջներ՝ Չկան

Ուսումնառության արդյունքները

Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝

1. **կատարի, ձևակերպի և կարդա առարկաների, կոնտուրների գծագրերը, չափագրումները և մասնագրերը.**
2. **կատարի էքիզներ և աշխատանքային գծագրեր.**
3. **կատարի և կարդա հանգույցների ու մեքենամասերի աշխատանքային գծագրերը, նրանց պայմանական նշանակումները և մասնագրերը:**

Գնահատման կարգը

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների լիարժեք ապահովվումն է:

Կատարման (կատարողականության) չափանիշները, գնահատման միջոցները, մեթոդաբանությունը և ռեսուրսները, երաշխավորված ժամաքանակը՝ ըստ մոդուլի ուսումնառության արդյունքների.

ԱՐԳՅՈՒՆՔ 1. Կատարել, ձևակերպել և կարդալ գծագրերը և մասնագրերը:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

- ա. ճիշտ է կատարում երկրաչափական կառուցումները և ձևակերպումները.
- բ. ճիշտ է պրոեկտում հարթ պատկերները և երկրաչափական մարմինները.
- գ. ճիշտ է տալիս կտրվածքներ և պատկերում է առաջադրված մոդելների էքիզները՝ նշելով չափսերը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Ուսանողին կտրվեն մի շարք առաջադրանքներ տեխնիկական գծագրման աշխատանքներին վերաբերվող գիտելիքների և հմտությունների կիրառումը ստուգելու նպատակով: Արդյունքի ձեռքբերումը հիմնված կլինի սահմանված կատարման բոլոր չափանիշների վրա, որի համար ուսանողը պետք է կատարի բոլոր առաջադրանքները:

Աշխատանքի կատարումը գրանցելու համար պետք է օգտագործել համապատասխան ստուգման թերթիկ:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Արդյունքի ուսուցումը կատարվելու է գործնական պարապմունքների միջոցով, նպատակ ունենալով ուսանողի մոտ ձևավորել տեխնիկական գծագրման աշխատանքներ կատարելու կարողություններ:

Ուսուցման ընթացքում օգտագործվելու են տեխնիկական գծագրության վերաբերյալ դիդակտիկ նյութեր, գծագրական գործիքներ և պիտույքներ, ինչպես նաև ուսումնական գրականություն: Կարող է օգտագործվել նաև համակարգչային տեխնիկա:

ՌԻՍՈՒՅՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

Գործնական պարապմունքներ՝ 18 ժամ

ԱՐԳՅՈՒՆՔ 2. Կատարել էքիզներ և աշխատանքային գծագրեր:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

- ա. ճիշտ ընտրում է չափող գործիքները մեքենամասի չափումները կատարելու համար.
- բ. ճշգրիտ կատարում է տրված մեքենամասի էքիզը՝ ըստ գծագրման կանոնների.
- գ. ճշգրիտ կազմում է դետալի աշխատանքային գծագիրը՝ տեխնիկական պահանջներին համապատասխան:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Ուսանողին կառաջադրվեն մոդելներ և մեքենամասեր՝ դրանց էքիզավորմանը վերաբերող գիտելիքների և հմտությունների կիրառումը ստուգելու նպատակով: Արդյունքի ձեռքբերումը հիմնված կլինի սահմանված կատարման բոլոր չափանիշների իրագործման վրա: Ունենալով էքիզը՝ ուսանողը պետք է կատարի աշխատանքային գծագիր:

Աշխատանքի կատարումը գրանցելու համար պետք է օգտագործել համապատասխան ստուգման թերթիկ:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝

Արդյունքի ուսուցումը կատարվելու է գործնական պարապմունքների միջոցով՝ նպատակ ունենալով ուսանողի մոտ ձևավորել դետալների էքիզավորման և գծագրերի կատարման կարողություններ: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են մոդելներ, դետալներ, չափող գործիքներ և գծագրական գործիքներ, պիտույքներ, ինչպես նաև ուսումնական գրականություն:

ՌԻՍՈՒՅՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

Գործնական պարապմունքներ 18 ժամ

ԱՐԳՅՈՒՆՔ 3. Կատարել և կարդալ հանգույցների ու մեքենամասերի աշխատանքային գծագրերը, դրանց պայմանական նշանակումները և մասնագրերը:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

- ա. արդիական տեխնիկական պահանջներին համապատասխան, բոլոր էական տվյալների ընդգրկմամբ՝ ճիշտ է կատարում և բացատրում հանգույցների և մեքենամասերի հավաքական գծագրերը.
- բ. ճիշտ է հատկորոշում և մեկնաբանում նստեցվաքների պայմանական նշանները.
- գ. ճիշտ է հատկորոշում և մեկնաբանում հանգույցների աշխատանքային գծագրերը և մասնագրերը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՅԸ՝

Ուսանողին կտրվեն առաջադրանքներ՝ տրակտորի առանձին հանգույցների և հավաքական միավորների հավաքական գծագրերի կատարման համար՝ պահանջելով ցույց տալ նաև քանդվի և չքանդվող միացումների, տարբեր նստեցվածքների պայմանական նշանները:

Կառաջադրվեն նաև առանձին հանգույցներից մեքենամասերի մասնատման միջոցով գծել դրանց աշխատանքային գծագրերը՝ ուսանողի գործնական գիտելիքները և հմտությունները՝ մասնագրերի ստանդարտների և կանոնակարգերի իմացությունը պարզելու նպատակով:

Արդյունքի ձեռքբերումը հիմնված կլինի սահմանված կատարման բոլոր չափանիշների վրա, որի համար ուսանողը պետք է կատարի բոլոր առաջադրանքները:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝

Արդյունքի ուսուցումը կատարվելու է գործնական պարապրունքների միջոցով՝ նպատակ ունենալով ուսանողին գիտելիքներ և գործնական հմտություններ տալ եռակցման միացությունների և կարերի գծագրման, եռակցման կարերի պայմանական նշանների, աշխատանքային գծագրերի և նրանց մասնագրերի կազմման սկզբունքների գործող չափորոշիչներին համապատասխան:

Ուսուցման ընթացքում օգտագործվելու են եռակցման միացությունների և կարերի պատկերմանը վերաբերող ժամանակակից ստանդարտներ և կանոնակարգեր, դիդակտիկ նյութեր, աշխատանքային գծագրեր, գծագրական գործիքներ և պարագաներ, ինչպես նաև ուսումնական գրականություն:

ՈՒՍՈՒՅՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

Գործնական պարապրունքներ 18 ժամ

4.3.4 ՄՈԴՈՒԼ 4. «ՆՅՈՒԹԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ»

Մոդուլի դասիչը՝

ԳՓ1-07-002

Մոդուլի նպատակը՝

Այս մոդուլը նախատեսված է «Գյուղատնտեսական մեքենաներ և սարքավորումներ վերանորոգող փականագործ» արհեստավորի պատրաստման համար: Մոդուլի շրջանակներում ուսումնասիրվում են՝ մետաղների և համաձուլվածքների դասակարգումը, հատկությունները, մետաղական համաձուլվածքները՝ թուջեր, ածխածնային և լեգիրված պողպատներ, գունավոր մետաղները և նրանց համաձուլվածքները, համաձուլվածքների մակնիշավորման սկզբունքները և կիրառության բնագավառները, եռակցման համար անհրաժեշտ մետաղական նախապատրաստվածքները: Ավարտելով այս մոդուլը՝ ուսանողը ձեռք կբերի մետաղները և համաձուլվածքները ճանաչելու կարողություն, կիմանա նրանց մակնիշավորման սկզբունքները, կտարբերի նախապատրաստվածքների պրոֆիլները և նրանց կիրառությունները:

Մոդուլի մակարդակը՝

1-ին

Մոդուլի տևողությունը՝

20 ժամ դասախոսություն,
8 ժամ գործնական պարապմունքներ:

Մոդուլի կրեդիտային արժեքը՝

« 0,75 »

Մուտքային պահանջները՝

Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է լիարժեքորեն տիրապետի «Ֆիզիկա» և «Քիմիա» առարկաներին՝ միջնակարգ դպրոցի ծրագրի ծավալով:

Հատուկ պահանջներ՝

Չկան

Ուսումնառության արդյունքը՝

Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝

1. տարբերի սև և գունավոր մետաղները, իմանա դրանց մակնիշավորումը և կիրառության բնագավառները: Ճանաչի և տարբերի մետաղների մշակման եղանակները:

Գնահատման կարգը՝

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների լիարժեք ապահովումն է:

Կատարման (կատարողականության) չափանիշները, գնահատման միջոցները, մեթոդաբանություները և ռեսուրսները, երաշխավորված ժամաքանակը ըստ մոդուլի ուսումնառության արդյունքների:

ԱՐԳՅՈՒՆՔ 1. Տարբերել սև և գունավոր մետաղները, իմանալ դրանց մակնիշավորումը և կիրառության բնագավառները: Ճանաչել և տարբերել մետաղների մշակման եղանակները:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

ա. սև և գունավոր մետաղների նմուշների կտրվածքներով ճանաչում և տարբերում է թուջերը, պողպատները և գունավոր մետաղները.

- բ. ճիշտ է ընթերցում և մեկնաբանում մետաղների և համաձուլվածքների մակնիշները.
- գ. ճանաչում է և ճիշտ մեկնաբանում տարբեր մետաղների մշակման եղանակները.
- դ. տիրապետում է մետաղների մեխանիկական հատկությունների որոշման եղանակներին:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Ուսանողին կտրամադրվեն թուջից, պողպատից, արույրից, բրոնզից, ալյումինի համաձուլվածքներից նմուշների հավաքածու և պրոֆիլների հավաքածու՝ մետաղները և նախապատրաստվածքները իրարից զանազանելու համար: Առաջադրվելու են մետաղական համաձուլվածքների մակնիշավորման ստանդարտներ՝ ընթերցելու և մեկնաբանելու նպատակով: Արդյունքի ձեռքբերումը հիմնված կլինի կատարման բոլոր չափանիշների վրա:

ՍԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԵՐԸ՝

Արդյունքի ուսուցումը կատարվելու է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով՝ նպատակ ունենալով ուսանողի մոտ ձրավորել մետաղների և համաձուլվածքների դասակարգման, հատկությունների մակնիշավորման, ճանաչման կարողություններ և կիրառությունների վերաբերյալ գիտելիքներ: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են մետաղների և համաձուլվածքների նմուշների և պրոֆիլների հավաքածուներ, դիդակտիկ նյութեր և ուսումնական գրականություն:

ՈՒՍՈՒՅՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

Դասախոսություն՝	20 ժամ
Գործնական պարապմունքներ՝	8 ժամ

4.3.5 ՄՈԴՈՒԼ 5. «ՏՐԱԿՏՈՐՆԵՐ»

Մոդուլի դասիչը՝

ՏՄ/ԳՓ1-07-001

Մոդուլի նպատակը՝

Այս մոդուլը նախատեսված է «Գյուղատնտեսական արտադրության տրակտորիստ-մեքենավար» և «Գյուղատնտեսական մեքենաներ և սարքավորումներ վերանորոգող փականագործ» արհեստավորների պատրաստման համար: Մոդուլի նպատակն է սովորողին տալ գիտելիքներ տրակտորների դասակարգման և ընդհանուր կառուցվածքի, տրակտորի շարժիչի ընդհանուր կառուցվածքի, աշխատանքի, հիմնական մեխանիզմների և համակարգերի վերաբերյալ: Ավարտելով այս մոդուլը՝ սովորողը կհամապատասխանի տրակտորների դասակարգումը և ընդհանուր կառուցվածքը, տրակտորային շարժիչների ընդհանուր կառուցվածքը և աշխատանքը:

Մոդուլի մակարդակը՝

1-ին

Մոդուլի տևողությունը՝

14 ժամ դասախոսություն
4 ժամ գործնական պարապմունքներ

Մոդուլի կրեդիտային արժեքը՝

« 0,5 »

Մուտքային պահանջները՝

Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է լիարժեքորեն տիրապետի «Ֆիզիկա» առարկային՝ միջնակարգ դպրոցի ծրագրի ծավալով:

Հատուկ պահանջներ՝

Չկան

Ուսումնառության արդյունքները՝

Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝

1. **իմանա տրակտորների և ինքնագնաց շասսիների դասակարգումը և կառուցվածքը**
2. **իմանա տրակտորային և գյուղատնտեսական ինքնագնաց մեքենաների շարժիչների ընդհանուր կառուցվածքը և աշխատանքը.**
3. **գործարկի շարժիչը:**

Գնահատման կարգը՝

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների լիարժեք ապահովումն է:

Կատարման (կատարողականության) չափանիշները, գնահատման միջոցները, մեթոդաբանությունը և ռեսուրսները, երաշխավորված ժամաքանակը ըստ մոդուլի ուսումնառության արդյունքների.

ԱՐԳՅՈՒՆՔ 1. Իմանալ տրակտորների և ինքնագնաց շասսիների դասակարգումը և ընդհանուր կառուցվածքը:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

ա. տարբերակում է տարբեր մակնիշների տրակտորները և ինքնագնաց շասսիները.

բ. ճիշտ է շարադրում տրակտորների և ինքնագնաց շասսիների ընդհանուր կառուցվածքը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՅԸ՝

Սովորողներին առաջարկվելու է շարադրել տրակտորների և ինքնագնաց շասիների դասակարգումը և ընդանուր կառուցվածքը:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝

Արդյունքի ուսուցումը կատարվելու է դասախոսությունների միջոցով՝ նպատակ ունենալով սովորողին գիտելիքներ տալ տրակտորների և ինքնագնաց շասիների դասակարգման և ընդանուր կառուցվածքի վերաբերյալ:

Ուսուցման ընթացքում օգտագործվելու են պլակատներ և ուսումնական գրականություն:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

Դասախոսություն՝

4 ժամ

ԱՐԳՅՈՒՆՔ 2. Իմանալ տրակտորային և գյուղատնտեսական ինքնագնաց մեքենաների շարժիչների ընդանուր կառուցվածքը և աշխատանքը:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

- ա. ճիշտ է նկարագրում շարժիչի ընդանուր կառուցվածքը, նրա հիմնական մեխանիզմները և համակարգերը.
- բ. ճիշտ է նկարագրում դիզելային և կարբյուրատորային շարժիչների աշխատանքային ցիկլերը.
- գ. ճիշտ է նկարագրում շարժիչների իրական պրոցեսները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՅԸ՝

Սովորողին կտրվի տրակտորի որոշակի մակնիշի շարժիչ և կառաջարկվի շարադրել ընդանուր կառուցվածքը, նրա հիմնական մեխանիզմները և համակարգերը, նկարագրել աշխատանքային ցիկլը և շարժիչում կատարվող իրական պրոցեսները:

Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե սովորողը ճիշտ է կատարում բոլոր տրված առաջադրանքները:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝

Արդյունքի ուսուցումը կատարվելու է դասախոսությունների միջոցով՝ նպատակ ունենալով սովորողին գիտելիքներ տալ տրակտորի շարժիչը շահագործելու համար: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են տրակտորի շարժիչների վերաբերյալ դի՝ակտիկ նյութեր և չափորոշիչներ, չափիչ գործիքներ, ուսումնական գրականություն:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

Դասախոսություն՝

8 ժամ

Գործնական պարապմունքներ՝

2 ժամ

ԱՐԳՅՈՒՆՔ 3. Գործարկել շարժիչը:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

- ա. ճիշտ է գործարկում դիզելային շարժիչը.
- բ. ճիշտ է շարադրում գործարկման ժամանակ անվտանգության տեխնիկայի պահանջները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Սովորողին առաջարկվելու է գործարկել դիզելային շարժիչը սահմանված կարգով:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԵՐԸ՝

Արդյունքի ուսուցումը կատարվելու է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով՝ նպատակ ունենալով ուսանողի մոտ ձևավորել տրակտորի շարժիչը գործարկելու կարողություն:

Ուսուցման ընթացքում օգտագործվելու են տրակտորի շարժիչների վերաբերյալ դիժակտիկ նյութեր և չափորոշիչներ, ուսումնական գրականություն:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

Դասախոսություն՝	2 ժամ
Գործնական՝ պարապմունքներ՝	2 ժամ

4.3.6 ՍՈՂՈՒԼ 6. «ՏՐԱԿՏՈՐԻ ՇԱՐԺԻՉԻ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ»

Մոդուլի դասիչը՝

SU/ԳՓ1-07-002

Մոդուլի նպատակը՝

Այս մոդուլը նախատեսված է «Գյուղատնտեսական արտադրության տրակտորիստ-մեքենավար» և «Գյուղատնտեսական մեքենաներ և սարքավորումներ վերանորոգող փականագործ» արհեստավորների պատրաստման համար: Մոդուլի նպատակն է սովորողին տալ գիտելիքներ տրակտորի շարժիչի հիմնական մեխանիզմների և համակարգերի վերաբերյալ և դրանք քանգելու, հավաքելու և կարգավորելու կարողություններ:

Մոդուլի մակարդակը՝

1-ին

Մոդուլի տևողությունը՝

12 ժամ դասախոսություն
24 ժամ գործնական պարապմունքներ

Մոդուլի կրեդիտային արժեքը՝

« 1 »

Մուտքային պահանջները՝

Այս մոդուլը ուսումնասիրելուց առաջ ուսանողը պետք է ուսումնասիրած լինի ԳՓ1-07-001 և SU/ԳՓ1-07-001 մոդուլները:

Հատուկ պահանջներ՝

Չկան

Ուսումնառության արդյունքները՝

Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝

1. քանդել, հավաքել և կարգավորել շուռտվիակա-շարժաթևային մեխանիզմը.:
2. քանդել, հավաքել և կարգավորել գագաբաշխիչ մեխանիզմը.
3. սպասարկել շարժիչի սնման համակարգը.
4. սպասարկել շարժիչի յուղման համակարգը.
5. սպասարկել շարժիչի հովացման համակարգ:

Գնահատման կարգը՝

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների լիարժեք ապահովումն է:

Կատարման (կատարողականության) չափանիշները, գնահատման միջոցները, մեթոդաբանությունը և ռեսուրսները, երաշխավորված ժամաքանակը ըստ մոդուլի ուսումնառության արդյունքների.

ԱՐԴՅՈՒՆՔ 1. Քանդել, հավաքել և կարգավորել շուռտվիակա-շարժաթևային մեխանիզմը:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

ա. ճիշտ է նկարագրում շուռտվիկ-շարժաթևային մեխանիզմի կառուցվածքը և աշխատանքը.

- բ. ճիշտ է քանդում և հավաքում շուռտվիկ-շարժաթևային մեխանիզմի գլանամխոցային խումբը.
- գ. ճիշտ է քանդում և հավաքում շուռտվիկ-շարժաթևային մեխանիզմի ծնկավոր լիսեռը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Ուսանողին կտրվի տրակտորի որոշակի մակնիշի շարժիչ: Առաջարկվելու է շարադրել այդ շարժիչի շուռտվիկ-շարժաթևային մեխանիզմի կառուցվածքը, նրա մեքենամասերի առանձնահատկությունները և լծորդումների բնույթը, քանդել և հավաքել շուռտվիակա-շարժաթևային մեխանիզմի գլանամխոցային խումբը և ծնկավոր լիսեռը:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՄՆԵՐԸ՝

Արդյունքի ուսուցումը կատարվելու է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով՝ նպատակ ունենալով ուսանողի մոտ ձևավորել շուռտվիկ-շարժաթևային մեխանիզմի գլանամխոցային խումբը և ծնկավոր լիսեռը քանդելու և հավաքելու կարողություն: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են տրակտորի շարժիչների վերաբերյալ դիդակտիկ նյութեր և չափորոշիչներ, մոնտաժային աշխատանքների համար գործիքներ, հանիչներ, չափիչ գործիքներ, ուսումնական գրականություն:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱԶԱՆԱԿԸ՝

Դասախոսություն՝	2 ժամ
Գործնական պարապմունքներ՝	6 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2. Քանդել, հավաքել և կարգավորել գազաբաշխիչ մեխանիզմը:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

- ա. ճիշտ է նկարագրում գազաբաշխիչ մեխանիզմի կառուցվածքը և աշխատանքը.
- բ. ճիշտ է քանդում և հավաքում գազաբաշխիչ մեխանիզմը.
- գ. ճիշտ է կարգավորում բաշխիչ լիսեռի առանցքային տեղաշարժը, կափույրների բացակները և ճնշանվազման մեխանիզմը.
- դ. ճիշտ է տեղադրում գազաբաշխիչ ժանանիվները և ստուգում գազաբաշխման փուլերը.

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Ուսանողին կտրվի տրակտորի որոշակի մակնիշի շարժիչ: Առաջարկվելու է շարադրել այդ շարժիչի գազաբաշխիչ մեխանիզմի կառուցվածքը և աշխատանքը, նրա մեքենամասերի առանձնահատկությունները, քանդել և հավաքել գազաբաշխիչ մեխանիզմը, կարգավորել գազաբաշխիչ և ճնշանվազման մեխանիզմները, ըստ նշանների տեղադրել ժանանիվները:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՄՆԵՐԸ՝

Արդյունքի ուսուցումը կատարվելու է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով՝ նպատակ ունենալով ուսանողի մոտ ձևավորել տրակտորի շարժիչի գազաբաշխիչ մեխանիզմը քանդելու, հավաքելու և կարգավորելու կարողություններ: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են տրակտորի շարժիչների վերաբերյալ դիդակտիկ նյութեր և չափորոշիչներ, մոնտաժային աշխատանքների համար գործիքներ, հանիչներ, չափիչ գործիքներ, ուսումնական գրականություն:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

Դասախոսություն՝	2 ժամ
Գործնական պարապմունքներ՝	4 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3. Սպասարկել շարժիչի սնման համակարգը:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

- ա. ճիշտ է նկարագրում շարժիչի սնման համակարգի կառուցվածքը, աշխատանքը, առանձին մեխանիզմների կառուցվածքը և նշանակությունը.
- բ. ճիշտ է ստուգում գտիչի տեխնիկական վիճակը, հավաքում այն և տեղադրում շարժիչի վրա.
- գ. ճիշտ է կարգավորում կարբյուրատորը.
- դ. ճիշտ է որոշում վառելիքի մատուցման մոմենտը.
- ե. ճիշտ է ստուգում և կարգավորում բոցամուղերը.
- զ. ճիշտ է շարադրում ավտոտրակտորային շարժիչների համար օգտագործվող վառելիանյութերի դասակարգումը և նրանց հատկությունները.

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Ուսանողին կտրվեն մի շարք առաջադրանքներ շարժիչի սնման համակարգի կառուցվածքին և աշխատանքին վերաբերվող գիտելիքները և կարողությունները ստուգելու նպատակով՝ որոշել գտիչների և կարբյուրատորի տեխնիկական վիճակը, հատուկ սարքով (մոմենտոսկոպով) որոշել վառելիքի մատուցման մոմենտը և կարգավորել այն, քանդել բոցամուղը, շարադրել նրա կառուցվածքը և բացատրել աշխատանքը, հավաքել բոցամուղը, ստուգել վառելիքի փոշիացման որակը, ստուգել բոցամուղի հերմետիկությունը, ստուգել և կարգավորել վառելիքի ներածման սկզբի ճնշումը, որոշել բոցամուղի անցունակությունը: Արդյունքի ձեռքբերումը հիմնված կլինի սահմանված կատարման բոլոր չափանիշների վրա, որի համար ուսանողը պետք է կատարի բոլոր առաջադրանքները:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Արդյունքի ուսուցումը կատարվելու է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով՝ նպատակ ունենալով ուսանողի մոտ ձևավորել տրակտորի շարժիչի սնման համակարգը սպասարկելու կարողություններ: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են տրակտորի շարժիչների վերաբերյալ դիդակտիկ նյութեր և չափորոշիչներ, մոնտաժային աշխատանքների համար գործիքներ, հանիչներ, չափիչ գործիքներ և սարքեր, ուսումնական գրականություն:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

Դասախոսություն՝	4 ժամ
Գործնական պարապմունքներ՝	8 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 4. Սպասարկել շարժիչի յուղման համակարգը:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

- ա. ճիշտ է նկարագրում շարժիչի յուղման համակարգի կառուցվածքը, աշխատանքը, առանձին մեխանիզմների կառուցվածքը և նշանակությունը.
- բ. ճիշտ է ստուգում յուղի պոմպի և գտիչի տեխնիկական վիճակը, հավաքում այն և տեղադրում շարժիչի վրա.

գ. ճիշտ է շարադրում տրակտորների համար օգտագործվող յուղերի և քսայուղերի դասակարգումը և նրանց հատկությունները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՅԸ՝

Ուսանողին կտրվեն մի շարք առաջադրանքներ շարժիչի յուղման համակարգի կառուցվածքին և աշխատանքին վերաբերվող գիտելիքները և կարողությունները ստուգելու նպատակով: Ուսանողին առաջարկվելու է որոշել յուղի պոմպի և գտիչի տեխնիկական վիճակը և տալ դրա գնահատականը: Արդյունքի ձեռքբերումը հիմնված կլինի սահմանված կատարման բոլոր չափանիշների վրա, որի համար ուսանողը պետք է կատարի բոլոր առաջադրանքները: Աշխատանքի կատարումը գրանցելու համար պետք է օգտագործել համապատասխան ստուգման թերթիկ:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Արդյունքի ուսուցումը կատարվելու է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով՝ նպատակ ունենալով ուսանողի մոտ ձևավորել տրակտորի շարժիչի յուղման համակարգը սպասարկելու կարողություններ: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են տրակտորի շարժիչների վերաբերյալ դիդակտիկ նյութեր և չափորոշիչներ, ստենդեր, մոն-տաժային աշխատանքների համար գործիքներ, հանիչներ, չափիչ գործիքներ, ուսումնական գրականություն:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

Դասախոսություն՝	2 ժամ
Գործնական պարապմունքներ՝	4 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 5. Սպասարկել շարժիչի հովացման համակարգ:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

- ա. ճիշտ է նկարագրում շարժիչի հովացման համակարգի կառուցվածքը, աշխատանքը, առանձին մեխանիզմների կառուցվածքը և նշանակությունը.
- բ. ճիշտ է ստուգում ջրի պոմպի և օդափոխիչի տեխնիկական վիճակը, քանդում և հավաքում այն և տեղադրում շարժիչի վրա.
- գ. ճիշտ է ստուգում հովացման համակարգի սարքերի տեխնիկական վիճակը.

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՅԸ՝

Ուսանողին կտրվեն մի շարք առաջադրանքներ շարժիչի հովացման համակարգի կառուցվածքին և աշխատանքին վերաբերվող գիտելիքները և կարողությունները ստուգելու նպատակով՝ որոշել ջրի պոմպի և օդափոխիչի տեխնիկական վիճակը և գնահատել այն, ստուգել թերմոստատի տեխնիկական վիճակը: Արդյունքի ձեռքբերումը հիմնված կլինի սահմանված կատարման բոլոր չափանիշների վրա, որի համար ուսանողը պետք է կատարի բոլոր առաջադրանքները: Աշխատանքի կատարումը գրանցելու համար պետք է օգտագործել համապատասխան ստուգման թերթիկ:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

- գ. կարողանում է ապահովել բոլոր էլեկտրասարքավորումների հողանցումը.
- դ. աշխատանքը սկսելուց առաջ ապահովում է օգտագործվող էլեկտրական հաղորդալարերի սարքին և մեկուսացված վիճակում լինելը.
- ե. ճիշտ է օգտվում սրածայր գործիքներից.

զ. գգալի կշիռ ունեցող ագրեգատները կամ հանգույցները տեղափոխելիս օգտվում է սալակներից կամ հատուկ ամրակներից.

է. պահպանում է հակահրդեհային պրոֆիլակտիկայի կանոնները և ճիշտ է օգտվում կրակմարիչից:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՅԸ՝

Ուսանողից կպահանջվի նախապատրաստել աշխատատեղը, բացատրել հողանցումների, լարերի մեկուսացվածության աստիճանը՝ ըստ աշխատանքների տեսակների, մեկնաբանել հակահրդեհային պրոֆիլակտիկայի կանոնները, բացատրել կրակմարիչի հետ աշխատելու հաջորդականությունը:

Արդյունքը համարվում է ձեռքբերված, եթե սովորողն ապահովում է անվտանգության կանոնների ամբողջ ծավալի պահպանումը:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝

Արդյունքի ուսուցումը կատարվելու է դասախոսության և գործնական պարապմունքների միջոցով: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են գործող ստանդարտներ, գործող շինարարական նորմաների և կանոնների տեղեկագրեր, դիդակտիկ նյութեր, համապատասխան սարքավորումներ, գործիքներ ու պարագաներ և ուսումնական գրականություն:

ՌԻՍՈՒՅՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

Դասախոսություն՝	2 ժամ
Գործնական պարապմունքներ՝	6 ժամ

ԱՐԳՅՈՒՆ 3. Արդյունավետ կիրառել նորոգման և վերականգնման աշխատանքների ժամանակ առաջացած վնասակար նյութերից, գազերից, ճառագայթումից և այրվածքներից պաշտպանվելու միջոցներ:

ա. ճիշտ է որոշում սահմանափակ տարածքներում աշխատանքներ կատարելիս հարկադրաբար արված օդափոխության բավարար աստիճանը, համուզվում է, որ ներկա է հերթապահ դիտորդ:

բ. ճիշտ է օգտագործում պատշպանական միջոցները՝ վահանակը, դիմակը, պաշտպանիչ ակնոցն ու լուսազտիչը, սաղավարտը, հատուկ արտահագուստը, ձեռնոցները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՅԸ՝

Ուսանողից կպահանջվի բացատրել համապատասխան պաշտպանական միջոցների նշանակությունը և կստուգվի նրա կողմից նորոգման և վերականգնման աշխատանքներ կատարելիս դրանց կիրառումը: Արդյունքը համարվում է ձեռքբերված, եթե ուսանողը բավարարում է կատարման բոլոր չափանիշների պահանջները:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝

Արդյունքի ուսուցումը կատարվելու է դասախոսության և գործնական պարապմունքների միջոցով: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են անձնական անվտանգությունն ապահովող միջոցներ և պարագաներ, գործող ստանդարտներ և այլ համապատասխան նորմատիվային փաստաթղթեր:

ՌԻՍՈՒՅՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

Դասախոսություն՝	4 ժամ
Գործնական պարապմունքներ՝	8 ժամ

4.3.17 ՍՈՂՈՒԼ 17. «ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԱՆՍԱՐՔՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ»

Մոդուլի դասիչը՝

ԳՓ1-07-004

Մոդուլի նպատակը՝

Այս մոդուլը նախատեսված է «Գյուղատնտեսական մեքենաներ և սարքավորումներ վերանորոգող փականագործ» արհեստավորի պատրաստման համար: Մոդուլի շրջանակներում ուսումնասիրվում են՝ մեքենամասերի և միացությունների անսարքությունները, ֆիզիկական կամ նյութական մաշվածք հասկացությունները, շփման տեսակները, մեքենայի բարոյական մաշվածք հասկացությունը: Ավարտելով այս մոդուլը ուսանողը կճանաչի մաշման տեսակներն ու դրանց տարատեսակները, նստվածքների տեսակները, մեքենամասերի դեֆորմացիաների և քայքայման, դրանց նյութի հատկությունների փոփոխման տեսակները և այլն: Ձեռք կբերի կարողություններ՝ ճանաչելու և կիրառելու տեխնիկական սպասարկման և նորոգման ժամանակ մեքենաների միացությունների և մեքենամասերի անսարքությունների կանխարգելման միջոցառումները:

Մոդուլի մակարդակը՝

1-ին

Մոդուլի տևողությունը՝

8 ժամ դասախոսություն,
18 ժամ գործնական պարապմունքներ:

Մոդուլի կրեդիտային արժեքը՝

« 0,75 »

Մուտքային պահանջները՝

Այս մոդուլն ուսումնասիրելուց առաջ ուսանողը պետք է ուսումնասիրած լինի ԳՓ1-07-002, SU/ԳՓ1-07-002, SU/ԳՓ1-07-004 և SU/ԳՓ1-07-005 մոդուլները:

Հատուկ պահանջներ՝

Չկան

Ուսումնառության արդյունքները՝

Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝

1. **Ճանաչի և հայտնաբերի միացությունների անսարքությունները.**
2. **Ճանաչի շփման տեսակները, հայտնաբերի ու տարբերակի մեքենամասերի դեֆորմացիաներն ու քայքայումը.**

Գնահատման կարգը՝

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների լիարժեք ապահովումն է:

Կատարման (կատարողականության) չափանիշները, գնահատման միջոցները, մեթոդաբանությունը և ռեսուրսները, երաշխավորված ժամաքանակն ըստ մոդուլի ուսումնառության արդյունքների:

ԱՐԳՅՈՒՆՔ 1. Ճանաչել և հայտնաբերել միացությունների անսարքությունները:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

- ա. ճիշտ է բացատրում միացությունների և կապերի կոշտության կորուստները,
- բ. հայտնաբերում է նախնական նստեցվածքների խախտումները,
- գ. հայտնաբերում է մեքենամասերի և դրանց բաղադրիչների փոխադարձ դիրքի փոփոխումը,

- դ. ճիշտ է շարադրում ֆիզիկական կամ նյութական մաշվածք հասկացությունները,
- դ. հայտնաբերում է հպվող մակերևութների միջև կոնտակտի որակի խախտումները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Ուսանողին կտրամադրվեն տրակտորի կամ որևէ գյուղատնտեսական մեքենայի անսարքության հետևանքով շահագործումից դուրս եկած մեքենամասեր՝ դրանց միացությունների անսարքությունները ճանաչելու և հայտնաբերելու համար: Արդյունքի ձեռքբերումը հիմնված կլինի կատարման բոլոր չափանիշների վրա:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝

Արդյունքի ուսուցումը կատարվելու է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով՝ նպատակ ունենալով ուսանողի մոտ ձևավորել մեքենամասերի և միացությունների անսարքությունները ճանաչելու և հայտնաբերելու կարողություն:

Ուսուցման ընթացքում օգտագործվելու են մեքենամասերի և միացությունների անսարքություններին վերաբերող դիդակտիկ նյութեր, անհրաժեշտ գործիքներ, պարագաներ և ուսումնական գրականություն:

ՌԻՍՈՒՅՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

Դասախոսություն՝	4 ժամ
Գործնական պարապմունքներ՝	8 ժամ

ԱՐԳՅՈՒՆՔ 2. Ճանաչել շփման տեսակները, հայտնաբերել ու տարբերակել մեքենամասերի դեֆորմացիաներն ու քայքայումը:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

- ա. ճիշտ է բացատրում, մեքենամասերի անսարքությունները, մաշում և մաշվածք հասկացությունները,
- բ. տարբերակում և ճիշտ է պարզաբանում շփման տեսակները, տրակտորների և գյուղատնտեսական մեքենաների տարբեր մեքենամասերի խմբերին բնորոշ մաշվածքների տեսակներն ու տարատեսակները,
- գ. հայտնաբերում և տարբերակում է տրակտորների և գյուղատնտեսական մեքենաների տարբեր մեքենամասերի դեֆորմացիաներն ու քայքայումը, դրանց նյութի հատկությունների փոփոխման տեսակները,
- դ. ճիշտ է իրականացնում տեխնիկական սպասարկման և նորոգման ժամանակ մեքենաների միացությունների և մեքենամասերի անսարքությունների կանխարգելման միջոցառումները,
- ե. ճիշտ է պարզաբանում մեքենայի բարոյական մաշվածք հասկացությունը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Ուսանողին կտրամադրվեն տրակտորի կամ որևէ գյուղատնտեսական մեքենայի անսարքության հետևանքով շահագործումից դուրս եկած մեքենամասեր՝ դրանց դեֆորմացիաները, նյութի քայքայումը հայտնաբերելու, պատճառները պարզաբանելու և մեկնաբանելու համար: Արդյունքի ձեռքբերումը հիմնված կլինի կատարման բոլոր չափանիշների վրա:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝

Արդյունքի ուսուցումը կատարվելու է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով՝ նպատակ ունենալով ուսանողի մոտ ձևավորել տրակտորների և գյուղատնտեսական մեքենաների տարբեր մեքենամասերի խմբերին բնորոշ մաշվածքների տեսակների ու

տարատեսակների, հնարավոր դեֆորմացիաները ու դրանց բնորոշ քայքայունը հայտնաբերման և տարբերակման կարողություններ: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են մեքենամասերի մաշվածքների տեսակների ու տարատեսակների, հնարավոր դեֆորմացիաների ու դրանց բնորոշ քայքայման վերաբերյալ դիդակտիկ նյութեր, համապատասխան պարագաներ և ուսումնական գրականություն:

ՈՒՍՈՒՅՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

Դասախոսություն՝	4 ժամ
Գործնական պարապմունքներ՝	10 ժամ

4.3.18 **ՍՈՂՈՒԼ 18. «ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՆՈՐՈԳՄԱՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ»**

Մոդուլի դասիչը՝

ԳՓ1-07-005

Մոդուլի նպատակը՝

Այս մոդուլը նախատեսված է «Գյուղատնտեսական մեքենաներ և սարքավորումներ վերանորոգող փականագործ» արհեստավորի պատրաստման համար: Մոդուլի շրջանակներում ուսումնասիրվում են՝ ընդհանուր հասկացություններ մեքենաների նորոգման, այդ նպատակով դրանց քանդման, ագրեգատների, հավաքական միավորների և մեքենա-մասերի լվացման, մեքենաների կոմպլեկտավորման, հավաքման, զելման և փորձարկման հիմնական հարցեր: Ավարտելով այս մոդուլը ուսանողը կտիրապետի մեքենաների քանդման և հավաքման, ագրե-գատների, հավաքական միավորների և մեքենամասերի լվացման, մեքենաների զելման և փորձարկման օպերացիաներին, կճանաչի դրանք կատարելիս օգտագործվող սարքերն ու գործիքները, ձեռք կբերի դրանցով աշխատելու կարողություններ:

Մոդուլի մակարդակը՝

1-ին

Մոդուլի տևողությունը՝

6 ժամ դասախոսություն,
20 ժամ գործնական պարապմունքներ:

Մոդուլի կրեդիտային արժեքը՝

« 0,75 »

Մուտքային պահանջները՝

Այս մոդուլն ուսումնասիրելուց առաջ ուսանողը պետք է ուսումնասիրած լինի ԳՓ1-07-003, SU/ԳՓ1-07-001 և SU/ԳՓ1-07-002 մոդուլները:

Հատուկ պահանջներ՝

Չկան

Ուսումնառության արդյունքները՝

Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝

1. **մեքենաները նախապատրաստի նորոգման համար.**
2. **կատարի մեքենաների քանդում.**
3. **կատարի ագրեգատների, հավաքական միավորների և մեքենամասերի լվացում.**
4. **կատարի մեքենաների կոմպլեկտավորման, հավաքման, զելման և փորձարկման օպերացիաներ.**

Գնահատման կարգը՝

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների լիարժեք ապահովումն է:

Կատարման (կատարողականության) չափանիշները, գնահատման միջոցները, մեթոդաբանությունը և ռեսուրսները, երաշխավորված ժամաքանակն ըստ մոդուլի ուսումնառության արդյունքների:

ԱՐԳՅՈՒՆՔ 1. Մեքենաները նախապատրաստել նորոգման համար:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

- ա. ճիշտ է բացատրում նորոգման արտադրություն, արտադրական և տեխնոլոգիական գործընթացները, մեքենաների նորոգում, մեքենամասերի նորոգում և վերականգնում, տեխնոլոգիական գործողություններ հասկացողությունները, նորոգմանը մեքենայի նախապատրաստման գործընթացը,
- բ. ճիշտ է շարադրում մեքենայի արտաքին մաքրման և լվացման աշխատանքների հերթականությունը, արտաքին լվացման մեքենաների տեսակները, դրանք օգտագործելիս անվտանգության տեխնիկայի կանոնները,
- գ. ճիշտ է իրականացնում մեքենաներից նստվածքների հեռացումը և արտաքին մաքրումը, յուղերի հեռացումն ու խոռոչների ակտիվ լվացումը,
- դ. ճիշտ է իրականացնում մեքենայի գնումն ու տեխնիկական ախտորոշումը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՅԸ՝

Ուսանողին կտրամադրվեն տրակտորի կամ որևէ գյուղատնտեսական մեքենայի անսարքության հետևանքով շահագործումից դուրս եկած և նորոգման ենթակա մեքենամասեր՝ դրանցից յուղերի և նստվածքների հեռացման և դրանց արտաքին մաքրման ու խոռոչների ակտիվ լվացման համար: Արդյունքի ձեռքբերումը հիմնված կլինի կատարման բոլոր չափանիշների վրա:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝

Արդյունքի ուսուցումը կատարվելու է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով՝ նպատակ ունենալով ուսանողի մոտ ձևավորել մեքենաների և հանգույցների՝ նորագմանը նախապատրաստելու համար նախատեսված գործողությունների կատարման կարողություններ:

Ուսուցման ընթացքում օգտագործվելու են մեքենաների և հանգույցների՝ նորագմանը նախապատրաստմանը վերաբերող դիդակտիկ նյութեր, անհրաժեշտ սարքավորումներ, գործիքներ ու պարագաներ և ուսումնական գրականություն:

ՈՒՍՈՒՅՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

Դասախոսություն՝	2 ժամ
Գործնական պարապմունքներ՝	4 ժամ

ԱՐԳՅՈՒՆՔ 2. Կատարել մեքենաների քանդում:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

- ա. ճիշտ է ներկայացնում մեքենաների քանդման աշխատանքների հաջորդականությունը,
- բ. ճիշտ է նախապատրաստում տրակտորների և գյուղատնտեսական մեքենաների որոշ հատուկ ագրեգատների և հավաքական միավորների քանդման տեղը,
- գ. ճիշտ է իրականացնում քանդման ժամանակ նախանորոգման ախտորոշումը՝ պահպանելով մեքենամասերի զելվողությունը,
- դ. ագրեգատների և հավաքական միավորների քանդման դեպքում ճիշտ է իրականացնում մեքենամասերի մակնիշավորումն ու ստուգիչ գործողությունները,
- ե. ճիշտ է թվարկում հանգույցների և ագրեգատների քանդման և հավաքման աշխատանքների հարմարանքները, սարքավորումներն ու գործիքները:

զ. քանդման և հավաքման գործողությունների ժամանակ ճիշտ է օգտվում մամլիչներից, հանիչներից, ունիվերսալ գործիքներից, ձեռքի և էլեկտրական կարապիկներից, բազմաձախարակներից:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Ուսանողին կտրամադրվեն տրակտորի կամ որևէ գյուղատնտեսական մեքենայի անսարք հանգույց կամ հավաքական միավոր՝ դրանք քանդելու համար: Արդյունքի ձեռքբերումը հիմնված կլինի կատարման բոլոր չափանիշների վրա:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝

Արդյունքի ուսուցումը կատարվելու է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով, նպատակ ունենալով ուսանողի մոտ ձևավորել տրակտորների և գյուղատնտեսական մեքենաների հանգույցների, հավաքական միավորների և առանձին մեքենամասերի քանդման օպերացիաներ կատարելու կարողություններ: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են մեքենաների հանգույցների, հավաքական միավորների, մեքենամասերի քանդման վերաբերյալ դիդակտիկ նյութեր, համապատասխան սարքավորումներ, գործիքներ ու պարագաներ և ուսումնական գրականություն:

ՈՒՍՈՒՅՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

Դասախոսություն՝	2 ժամ
Գործնական պարապմունքներ՝	6 ժամ

ԱՐԳՅՈՒՆ 3. Կատարել ագրեգատների, հավաքական միավորների և մեքենամասերի վնասում:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

- ա. ճիշտ է ներկայացնում մեքենաների վնասման եղանակները, վնասման մեքենաների տիպերը և դրանց բնութագրերը,
- բ. ճիշտ է իրականացնում ագրեգատների, հավաքական միավորների և մեքենամասերի վնասման տեխնոլոգիական օպերացիաները,
- դ. ճիշտ է թվարկում վնասման ժամանակ պինդ նստվածքների հեռացման առանձնահատկությունները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Ուսանողին կտրամադրվի տրակտորի կամ որևէ գյուղատնտեսական մեքենայի անսարք հանգույց կամ հավաքական միավոր՝ դրանց վնասման համար: Արդյունքի ձեռքբերումը հիմնված կլինի կատարման բոլոր չափանիշների վրա:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝

Արդյունքի ուսուցումը կատարվելու է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով՝ նպատակ ունենալով ուսանողի մոտ ձևավորել տրակտորների և գյուղատնտեսական մեքենաների հանգույցների, հավաքական միավորների և առանձին մեքենամասերի վնասման օպերացիաների կատարման կարողություններ: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են մեքենաների հանգույցների, հավաքական միավորների, մեքենամասերի վնասման վերաբերյալ դիդակտիկ նյութեր, համապատասխան սարքավորումներ, գործիքներ ու պարագաներ և ուսումնական գրականություն:

ՈՒՍՈՒՅՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

Գործնական պարապմունքներ՝	4 ժամ
--------------------------	-------

ԱՐԳՅՈՒՆՔ 4. Կատարել մեքենաների կոմպլեկտավորման, հավաքման, զելման և փորձարկման գործողություններ:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

- ա. ճիշտ է մեկնաբանում հավաքական միավորների կոմպլեկտավորումը մեքենամասերով և բացատրում մեքենաների հավաքման աշխատանքների հաջորդականությունը,
- բ. ճիշտ է իրականացնում հեղյուսային, կոնական, բազմաերիթային և երիթային միացությունների հավաքման աշխատանքները,
- գ. ճիշտ է իրականացնում շարժական մահցումների հավաքման և կարգավորման աշխատանքները,
- դ. ագրեգատների և հավաքական միավորների հավաքման դեպքում ճիշտ է իրականացնում բազմահենարանային լիսեռների մոնտաժը և բացակների վերահսկումը,
- ե. ճիշտ է թվարկում հանգույցների և ագրեգատների հավաքման աշխատանքների հարմարանքները, սարքավորումներն ու գործիքները:
- զ. հավաքման գործողությունների ժամանակ ճիշտ է օգտվում մամլիչներից, հանիչներից, ունիվերսալ գործիքներից, ձեռքի և էլեկտրական կարապիկներից, բազմաճախարակներից:
- է. հավաքման ժամանակ ճիշտ է իրականացնում խցվածքների մոնտաժավորումը (խցուկներ, միջադիրներ և այլն), կենտրոնարկման, կարգավորումների, հարմարադրման և հավասարակշռման աշխատանքները:
- ը. ճիշտ է մեկնաբանում զելման աշխատանքները, դրանց նպատակն ու անցկացման հիմքերը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՅԸ՝

Ուսանողին կտրամադրվեն տրակտորի կամ որևէ գյուղատնտեսական մեքենայի անսարք հանգույց կամ հավաքական միավոր՝ դրանք քանդելուց հետո հավաքելու համար: Արդյունքի ձեռքբերումը հիմնված կլինի կատարման բոլոր չափանիշների վրա:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝

Արդյունքի ուսուցումը կատարվելու է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով՝ նպատակ ունենալով ուսանողի մոտ ձևավորել տրակտորների և գյուղատնտեսական մեքենաների հանգույցների, հավաքական միավորների և առանձին մեքենամասերի կոմպլեկտավորման, հավաքման, զելման գործողություններ կատարելու կարողություններ: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են մեքենաների հանգույցների, հավաքական միավորների, մեքենամասերի կոմպլեկտավորման, հավաքման, զելման վերաբերյալ դիդակտիկ նյութեր, համապատասխան սարքավորումներ, գործիքներ ու պարագաներ և ուսումնական գրականություն:

ՌԻՍՈՒՅՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

Դասախոսություն՝	2 ժամ
Գործնական պարապմունքներ՝	6 ժամ

4.3.19 ՄՈԴՈՒԼ 19. «ՄԵՏԱԳԻ ՀԱՏՈՒՄԸ, ՀԱՐԹՈՒՄԸ ԵՎ ԾՈՒՄԸ, ԿՏՐՈՒՄԸ, ԽԱՐՏՈՑՈՒՄԸ»

Մոդուլի դասիչը՝

ԳՓ1-07-006

Մոդուլի նպատակը՝

Այս մոդուլը նախատեսված է «Գյուղատնտեսական մեքենաներ և սարքավորումներ վերանորոգող փականագործ» արհեստավորի պատրաստման համար: Մոդուլի շրջանակներում ուսումնասիրվում են՝ ընդհանուր հասկացողություններ մետաղների հատման, հարթման, ծռման և խարտոցման մասին, պարզաբանվում են մետաղների հատման, հարթման, ծռման, կտրման և խարտոցման աշխատանքների եղանակները, խտանի առաջացումը և անվտանգ աշխատանքի կանոնները մետաղների հատման, հարթման, ծռման, կտրման և խարտոցման աշխատանքների ժամանակ: Ավարտելով այս մոդուլը՝ ուսանողը կճանաչի հատման, հարթման, ծռման, կտրման և խարտոցման գործիքներն ու ձեռք կբերի դրանցով աշխատելու կարողություններ:

Մոդուլի մակարդակը՝

1-ին

Մոդուլի տևողությունը՝

10 ժամ դասախոսություն,
18 ժամ գործնական պարապմունքներ:

Մոդուլի կրեդիտային արժեքը՝

« 0,75 »

Մուտքային պահանջները՝

Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է լիարժեքորեն տիրապետի «Ֆիզիկա» և «Քիմիա» առարկաներին՝ միջնակարգ դպրոցի ծրագրի ծավալով և ուսումնասիրած լինի ԳՓ1-07-001, ԳՓ1-07-002, ԳՓ1-07-003, ԳՓ1-07-004 և ԳՓ1-07-005 մոդուլները:

Հատուկ պահանջներ՝

Չկան

Ուսումնառության արդյունքները՝

Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝

1. կատարի մետաղի հատում մամլակի մեջ, սալի և զնդանի վրա, մեքենայացված հատում.
2. կատարի մետաղի հարթում.
3. կատարի մետաղի ծռում.
4. կատարի մետաղի կտրում.
5. կատարի մետաղի խարտոցում:

Գնահատման կարգը՝

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների լիարժեք ապահովումն է:

Կատարման (կատարողականության) չափանիշները, գնահատման միջոցները, մեթոդաբանությունը և ռեսուրսները, երաշխավորված ժամաքանակն ըստ մոդուլի ուսումնառության արդյունքների:

ԱՐԴՅՈՒՆՔ 1. Կատարել մետաղի հատում մամլակի մեջ, սալի և գնդանի վրա, մեքենայացված հատում:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

- ա. ճիշտ է տեղակայում թերթավոր նյութը մամլակի մեջ և իրականացնում՝
- շերտի հատումը,
 - շերտավոր նյութից մեքենամասի հատումը.
 - լայն մակերևույթների հատումը՝ ակոսիկների հատում կրեյցմեյսելով և ելունների հատում հատիչով.
 - կրեյցմեյսելով կամ ակոսահատիչով ճիշտ է կատարում կորագիծ ակոսների հատումը.
- բ. ճիշտ է իրականացնում ակոսների և ճեղքերի հատումը (լայնական կամ երկայնական) գազային կամ այլ խողովակներում.
- գ. ճիշտ է իրականացնում թուջե խողովակների կտորահատումը
- ե. սալի և գնդանի վրա ճիշտ է իրականացնում՝
- շերտավոր և կլոր նյութի հատումը.
 - ճիշտ է իրականացնում նախապատրաստվածքի արտահատումը թերթավոր նյութից:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Ուսանողին կտրամադրվեն թերթավոր, շերտավոր նյութերով, լայն մակերևույթով և ձողավոր մետաղյա մնուշների հավաքածու, պողպատյա և թուջե խողովակներ՝ դրանք մամլակի մեջ կամ սալի և գնդանի վրա հատելու, ակոսահատելու կամ կտորահատելու համար: Արդյունքի ձեռքբերումը հիմնված կլինի կատարման բոլոր չափանիշների վրա:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝

Արդյունքի ուսուցումը կատարվելու է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով, նպատակ ունենալով ուսանողի մոտ ձևավորել մամլակի մեջ, սալի և գնդանի վրա ձեռքի միջոցով կամ մեքենայացված տարբեր եղանակներով մետաղների հատման կարողություններ:

Ուսուցման ընթացքում օգտագործվելու են մետաղների հատման և եղանակների վերաբերյալ դիդակտիկ նյութեր և չափորոշիչներ, հատման գործիքներ և պարագաներ և ուսումնական գրականություն:

ՈՒՍՈՒՅՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

Դասախոսություն՝	2 ժամ
Գործնական պարապմունքներ՝	4 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2. Կատարել մետաղի հարթում:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

- ա. ճիշտ է զեկուցում նախապատրաստական աշխատանքների կատարման մասին.
- բ. ճիշտ է ուղղում շերտավոր կամ կլոր նյութերը.
- գ. ճիշտ է հարթում թերթավոր նյութը և շատ բարակ մետաղյա թերթերը.
- դ. ճիշտ է իրականացնում ձողանյութի և լիսեռների ուղղումը.

ե. ճիշտ է իրականացում մխված առարկաների ուղղումը.

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՅԸ՝

Ուսանողին կտրամադրվեն թերթավոր, շերտավոր կամ ձողավոր տեսքով մետաղյա նմուշների հավաքածու, ինչպես նաև ծռված լիսեռներ և մխված առարկաներ՝ դրանք սալի ու գնդանի վրա հարթելու և ուղղելու համար: Արդյունքի ձեռքբերումը հիմնված կլինի կատարման բոլոր չափանիշների վրա:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝

Արդյունքի ուսուցումը կատարվելու է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով, նպատակ ունենալով ուսանողի մոտ ձևավորել սալի ու գնդանի վրա մետաղների հարթման և ծռված լիսեռներն ու մխված առարկաները ուղղելու տարբեր եղանակների կարողություններ: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են մետաղների հարթման եղանակների վերաբերյալ դիդակտիկ նյութեր և չափորոշիչներ, համապատասխան գործիքներ ու պարագաներ և ուսումնական գրականություն:

ՌԻՍՈՒՅՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

Դասախոսություն՝	2 ժամ
Գործնական պարապմունքներ՝	4 ժամ

ԱՐԳՅՈՒՆ 3. Կատարել մետաղի ծռում:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

- ա. կախված մեքենամասի ձևից ճիշտ է հաշվարկում նախապատրաստվածքի երկարությունը.
- բ. ճիշտ է չափանշում և արտահատում թերթավոր մեքենամասի նախապատրաստվածքը.
- գ. ճիշտ է շարադրում և իրականացնում ձողանյութի ու շերտանյութի ծռման գործողությունների հաջորդականությունը.
- գ. ճիշտ է ծռումը խողովակները սառը վիճակում, խողովակները ծռելիս կարողանում է հիմնավորել լցանյութի կիրառումը.
- դ. ճիշտ է իրականացնում խողովակի ծռումը տաք վիճակում.
- դ. ճիշտ է իրականացնում խողովակների գրտնակումումը.
- ե. ճիշտ է հաշվարկում գլանաձև, կոնաձև և պարուրակաձև զսպանակների երկարություններն ու իրականացնում դրանց փաթաթումը.
- զ. ճիշտ է շարադրում մետաղի ուղղման և ծռման դեպքում խոտանի պատճառներն ու անվտանգ աշխատանքի կանոնները.

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՅԸ՝

Ուսանողին կտրամադրվեն թերթավոր, շերտավոր կամ ձողավոր տեսքով մետաղյա նախապատրաստվածքների նմուշներ դրանց երկարությունները որոշելու, չափանշելու և ըստ գծագրի ծռելու համար: Կտրամադրվեն նաև խողովակների նմուշներ՝ դրանք ծռելու և գրտնակելու համար, ինչպես նաև մետաղալար՝ վերջինիցս զսպանակներ փաթաթելու համար: Արդյունքի ձեռքբերումը հիմնված կլինի կատարման բոլոր չափանիշների վրա:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝

Արդյունքի ուսուցումը կատարվելու է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով, նպատակ ունենալով ուսանողի մոտ ձևավորել թերթավոր, շերտավոր կամ ձողավոր տեսքով մետաղյա առարկաները, խողովակները ծռելու, վերջիններս նաև գրտնակելու, մետաղալարերից տարբեր տիպի զսպանակներ փաթաթելու կարողություններ: Ուսուցման ընթացքում օգտագործվելու

են մետաղների ծռման, խողովակների գրտնակման, զսպանակների փաթաթման եղանակների վերաբերյալ դիդակտիկ նյութեր և չափորոշիչներ, համապատասխան գործիքներ ու պարագաներ և ուսումնական գրականություն:

ՈՒՍՈՒՅՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

Դասախոսություն՝	2 ժամ
Գործնական պարապմունքներ՝	4 ժամ

ԱՐԳՅՈՒՆՔ 4. Կատարել մետաղի կտրում:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

- ա. ճիշտ է թվարկում մետաղների կտրման եղանակները և այն գործիքները, որոնցով կտրում է կատարվում.
- բ. տիրապետում է մետաղատրոցով աշխատելու եղանակներին.
- գ. ճիշտ է աշխատում ձեռքի սրոցով,
- դ. ճիշտ է տեղակայում և ամրացնում մետաղատրոցի ժապավենը հաստոցին.
- ե. ճիշտ է իրականացնում խողովակի և կլոր նյութերի կտրումը.
- զ. ճիշտ է իրականացնում շերտավոր և թերթավոր մետաղի կտրումը.
- է. ճիշտ է իրականացնում մկրատով տարբեր մետաղների կտրումը.
- ը. ճիշտ է շարադրում մետաղի կտրման դեպքում խոտանի պատճառներն ու անվտանգ աշխատանքի կանոնները.

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՅԸ՝

Ուսանողին կտրամադրվեն թերթավոր, շերտավոր կամ ձողավոր տեսքով մետաղյա նախապատրաստվածքների մուշներ՝ դրանք տարբեր գործիքներով ու եղանակներով կտրելու համար: Արդյունքի ձեռքբերումը հիմնված կլինի կատարման բոլոր չափանիշների վրա:

ՄԵԹՈԳՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝

Արդյունքի ուսուցումը կատարվելու է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով, նպատակ ունենալով ուսանողի մոտ ձևավորել թերթավոր, շերտավոր կամ ձողավոր տեսքով մետաղյա առարկաները, խողովակները կտրելու եկարողություններ:

Ուսուցման ընթացքում օգտագործվելու են մետաղների և խողովակների կտրման եղանակների վերաբերյալ դիդակտիկ նյութեր և չափորոշիչներ, համապատասխան գործիքներ ու պարագաներ և ուսումնական գրականություն:

ՈՒՍՈՒՅՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

Դասախոսություն՝	2 ժամ
Գործնական պարապմունքներ՝	4 ժամ

ԱՐԳՅՈՒՆՔ 5. Կատարել մետաղի խարտոցում:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

- ա. ճիշտ է բացատրում խարտոցների տեսակները, դրանց օգտագործման եղանակները և խնամքը.
- բ. ճիշտ է իրականացնում խարտոցի ընտրությունը.
- գ. տիրապետում է խարտոցելու ձևերին ու կանոններին,
- դ. ճիշտ է իրականացնում լայն և նեղ հարթությունների, կորագիծ մակերևույթների խարտոցումը.

գ. ճիշտ է շարադրում մետաղի խարտոցման դեպքում խոտանի պատճառներն ու անվտանգ աշխատանքի կանոնները.

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Ուսանողին կտրամադրվեն թերթավոր, շերտավոր կամ ձողավոր տեսքով մետաղյա նախապատրաստվածքների նմուշներ՝ դրանք տարբեր եղանակներով խարտոցելու համար: Արդյունքի ձեռքբերումը հիմնված կլինի կատարման բոլոր չափանիշների վրա:

ՍԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝

Արդյունքի ուսուցումը կատարվելու է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով՝ նպատակ ունենալով ուսանողի մոտ ձևավորել մետաղների խարտոցման կարողություններ:

Ուսուցման ընթացքում օգտագործվելու են մետաղների և խողովակների կտրման եղանակների վերաբերյալ դիդակտիկ նյութեր և չափորոշիչներ, համապատասխան գործիքներ ու պարագաներ և ուսումնական գրականություն:

ՈՒՍՈՒՅՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

Դասախոսություն՝	2 ժամ
Գործնական պարապմունքներ՝	2 ժամ

4.3.20 ՍՈՂՈՒԼ 20. «ԳԱՅԼԻԿՈՆՈՒՄ, ԵԶՐԱԼԱՅՆՈՒՄ ԵՎ ԱՆՅՔԱԿՈԿՈՒՄ»

Մոդուլի դասիչը՝

ԳՓ1-07-007

Մոդուլի նպատակը՝

Այս մոդուլը նախատեսված է «Գյուղատնտեսական մեքենաներ և սարքավորումներ վերանորոգող փականագործ» արհեստավորի պատրաստման համար: Մոդուլի շրջանակներում ուսումնասիրվում են՝ ընդհանուր հասկացողություններ մեքենամասերի գայլիկոնման, եզրալայնման և անցքահատման մասին, պարզաբանվում են մեքենամասերի գայլիկոնման, եզրալայնման և անցքահատման աշխատանքների ու օպերացիաների եղանակները, խոտանի առաջացումը և անվտանգ աշխատանքի կանոնները մեքենամասերի գայլիկոնման, եզրալայնման և անցքահատման աշխատանքների ժամանակ: Ավարտելով այս մոդուլը՝ ուսանողը ձեռք կբերի մեքենամասերի գայլիկոնման, եզրալայնման և անցքահատման կարողություններ:

Մոդուլի մակարդակը՝

1-ին

Մոդուլի տևողությունը՝

6 ժամ դասախոսություն,
20 ժամ գործնական պարապմունքներ:

Մոդուլի կրեդիտային արժեքը՝

« 0,75 »

Մուտքային պահանջները՝

Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է լիարժեքորեն տիրապետի «Երկրաչափություն» առարկային՝ միջնակարգ դպրոցի ծրագրի ծավալով և ուսումնասիրած լինի ԳՓ1-07-001, ԳՓ1-07-002 և ՍՄ/ԳՓ1-07-003 մոդուլները:

Հատուկ պահանջներ՝

Չկան

Ուսումնառության արդյունքները՝

Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝

1. կատարի գայլիկոնների սրում և ենթասրում.
2. կատարի գայլիկոնում ըստ գծանշման, կոնդուկտորի և հենակի.
3. կատարի ձեռքի գայլիկոնում.
4. կատարի եզրալայնում, անցքալայնում և անցքակտկում:

Գնահատման կարգը՝

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների լիարժեք ապահովումն է:

Կատարման (կատարողականության) չափանիշները, գնահատման միջոցները, մեթոդաբանությունը և ռեսուրսները, երաշխավորված ժամաքանակն ըստ մոդուլի ուսումնառության արդյունքների:

ԱՐԳՅՈՒՆԸ 1. Կատարել գայլիկոնների սրում և ենթասրում:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

ա. ճիշտ է բացատրում գայլիկոնման օպերացիան և թվարկում գայլիկոնման գործիքները,

- բ. ճիշտ է բացատրում պարուրածն և փետրիկավոր գայլիկոնների կառուցվածքներն ու կտրող մասերը,
- գ. ճիշտ է բացատրում տաշեղի գոյանալը գայլիկոնման ժամանակ,
- դ. ճիշտ է ցույց տալիս գայլիկոնի ատամի սրվածքի անկյունը, կտրող եզրը, լայնական եզրը, առջևի և ետևի մակերևույթները և բացատրում նշված տարրերից յուրաքանչյուրի նշանակությունը,
- ե. ճիշտ է բացատրում թե ինչպիսի անկյուններից է կազմվում գայլիկոնի սրվածքի անկյունը և թվարկում սրվածքների տեսակները,
- զ. ճիշտ է իրականացնում գայլիկոնների սրումը ձեռքով՝ սրող հաստոցի վրա:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Ուսանողին կտրամադրվեն սրման ենթակա գայլիկոններ՝ դրանք սրող հաստոցի վրա ձեռքով կամ հատուկ ակաևոցի միջոցով սրելու համար: Արդյունքի ձեռքբերումը հիմնված կլինի կատարման բոլոր չափանիշների վրա:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝

Արդյունքի ուսուցումը կատարվելու է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով, նպատակ ունենալով ուսանողի մոտ ձևավորել տարբեր եղանակներով գայլիկոնների սրման և ենթասրման կարողություններ:

Ուսուցման ընթացքում օգտագործվելու են գայլիկոնների սրման և ենթասրման եղանակների վերաբերյալ դիդակտիկ նյութեր և չափորոշիչներ, հատման գործիքներ և պարագաներ և ուսումնական գրականություն:

ՈՒՍՈՒՅՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

Դասախոսություն՝	2 ժամ
Գործնական պարապմունքներ՝	4 ժամ

ԱՐԳՅՈՒՆ 2. Կատարել գայլիկոնում ըստ գծանշման, կոնդուկտորի և հենակի:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

- ա. ճիշտ է բացատրում և հաշվարկում գայլիկոնման ժամանակ կտրման պրոցեսի հիմնական տարրերը՝
 - կտրման արագությունը.
 - մատուցումը:
- բ. ճիշտ է մեկնաբանում գայլիկոնման ժամանակ տեղի ունեցող շարժումները և այն գործոնները, որոնցով պայմանավորված է գայլիկոնով կտրելու պրոցեսի տևողությունը.
- գ. տրված չափի ճշգրիտ անցք ստանալու համար ճիշտ է ընտրում գայլիկոնման համար անհրաժեշտ գայլիկոնի տրամագիծը.
- դ. ճիշտ է ընտրում գայլիկոնման համար անհրաժեշտ ձեռքի և մեխանիկական հարմարանքները.
- ե. գայլիկոնը ճիշտ է ամրացնում հաստոցի իլին.
- զ. զանազան նյութեր գայլիկոնելիս ճիշտ ձևով է ընտրում և օգտագործում համապատասխան հովացնող հեղուկները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Ուսանողին կտրամադրվեն մետաղյա մեքենամասերի (պողպատյա թերթավոր, շերտավոր կամ ձողավոր տեսքով շինվածքներ կամ թուջե չորսվակներ) հավաքածու դրանց վրա ըստ

գծանշման, ըստ կոնդուկտորի կամ հենակի միջոցով գայլիկոնիչ հաստոցի վրա միջանցիկ, ոչ միջանցիկ կամ խուլ անցքեր մշակելու համար: Արդյունքի ձեռքբերումը հիմնված կլինի կատարման բոլոր չափանիշների վրա:

ՍԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝

Արդյունքի ուսուցումը կատարվելու է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով, նպատակ ունենալով ուսանողի մոտ ձևավորել սալի ու գնդանի վրա մետաղների հարթման և ծոված լիսեռներն ու մխված առարկաները տարբեր եղանակներով ուղղելու կարողություններ:

Ուսուցման ընթացքում օգտագործվելու են մետաղների հարթման եղանակների վերաբերյալ դիդակտիկ նյութեր և չափորոշիչներ, համապատասխան գործիքներ ու պարագաներ և ուսումնական գրականություն:

ՌԻՍՈՒՅՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

Դասախոսություն՝	2 ժամ
Գործնական պարապմունքներ՝	6 ժամ

ԱՐԳՅՈՒՆՔ 3. Կատարել ձեռքի գայլիկոնում:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

- ա. գայլիկոնը ճիշտ է սեղմում ձեռքի շաղափիչի կապիչի մեջ.
- բ. ճիշտ է բացատրում գայլիկոնման ժամանակ ճչանակի օգտագործման և կիրառման դեպքերը.
- գ. ճիշտ է շարադրում էլեկտրական և պնևմատիկ շաղափիչների տեսակները, դրանցով ճիշտ կարողանում է իրականացնում գայլիկոնում.
- դ. ճիշտ է օգտագործում էլեկտրական և պնևմատիկ շաղափիչների հարմարանքները.
- ե. ճիշտ է պարզաբանում աշխատանքի ժամանակ գայլիկոնի կոտրվելու պատճառները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՅԸ՝

Ուսանողին կտրամադրվեն մետաղյա մեքենամասերի (պողպատյա թերթավոր, շերտավոր կամ ձողավոր տեսքով շինվածքներ կամ թուջե չորսվակներ) հավաքածու՝ դրանց վրա ձեռքի շաղափիչով, էլեկտրական կամ պնևմատիկ շաղափիչներով միջանցիկ, ոչ միջանցիկ կամ խուլ անցքեր մշակելու համար: Արդյունքի ձեռքբերումը հիմնված կլինի կատարման բոլոր չափանիշների վրա:

ՍԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝

Արդյունքի ուսուցումը կատարվելու է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով, նպատակ ունենալով ուսանողի մոտ ձևավորել թերթավոր, շերտավոր կամ ձողավոր տեսքով մետաղյա առարկաները, խողովակները ծռելու, վերջիներս նաև գրտնակելու, մետաղալարերից տարբեր տիպի զսպանակներ փաթաթելու կարողություններ:

Ուսուցման ընթացքում օգտագործվելու են մետաղների ծռման, խողովակների գրտնակման, զսպանակների փաթաթման եղանակների վերաբերյալ դիդակտիկ նյութեր և չափորոշիչներ, համապատասխան գործիքներ ու պարագաներ և ուսումնական գրականություն:

ՌԻՍՈՒՅՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

Գործնական պարապմունքներ՝	4 ժամ
--------------------------	-------

ԱՐԳՅՈՒՆՔ 4. Կատարել եզրալայնում, անցքալայնում և անցքակոկում:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

- ա. ճիշտ է պարզաբանում և տարբերակում եզրալայնում և անցքալայնումը.
- բ. տիրապետում է կոնային և ճակատային ստամներով եզրալայնիչներով, ինչպես նաև տարբեր անցքալայնիչներով աշխատելու եղանակներին.
- գ. ճիշտ է բացատրում անցքակոկումը և հիմնավորում է դրա կիրառման դեպքերը.
- դ. ճիշտ է բացատրում և իրականացնում ձեռքով և գայլիկոնիչ հաստոցի վրա անցքակոկման օպերացիաները.
- ե. ճիշտ է հանում գործիքը (գայլիկոնը, եզրալայնիչը և անցքակոկիչը) իլի անցքից.
- զ. ճիշտ է ընտրում գայլիկոնի, եզրալայնիչի և անցքակոկիչի տրամագծերը.
- է. ճիշտ է շարադրում գայլիկոնման դեպքում խոտանի պատճառներն ու անվտանգ աշխատանքի կանոնները.

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՅԸ`

Ուսանողին կտրամադրվեն մետաղյա մեքենամասերի (պողպատյա թերթավոր, շերտավոր կամ ձողավոր տեսքով շինվածքներ կամ թուջե չորսվակներ) հավաքածու՝ դրանց վրա գայլիկոնված անցքերը եզրալայնելու, անցքալայնելու և անցքակոկման համար: Արդյունքի ձեռքբերումը հիմնված կլինի կատարման բոլոր չափանիշների վրա:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ`

Արդյունքի ուսուցումը կատարվելու է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով, նպատակ ունենալով ուսանողի մոտ ձևավորել թերթավոր, շերտավոր կամ ձողավոր տեսքով մետաղյա առարկաները, խողովակները կտրելու կարողություններ:

Ուսուցման ընթացքում օգտագործվելու են մետաղների և խողովակների կտրման եղանակների վերաբերյալ դիդակտիկ նյութեր և չափորոշիչներ, համապատասխան գործիքներ ու պարագաներ և ուսումնական գրականություն:

ՌԻՍՈՒՅՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ`

Դասախոսություն`	2 ժամ
Գործնական պարապմունքներ`	6 ժամ

4.3.21 ՍՈՂՈՒԼ 21. «ՊԱՐՈՒՐԱԿՈՒՄ, ԳԱՄՈՒՄ»

Մոդուլի դասիչը՝

ԳՓ1-07-008

Մոդուլի նպատակը՝

Այս մոդուլը նախատեսված է «Գյուղատնտեսական մեքենաներ և սարքավորումներ վերանորոգող փականագործ» արհեստավորի պատրաստման համար: Մոդուլի շրջանակներում ուսումնասիրվում են՝ ընդհանուր հասկացողություններ քանդովի (պարուրակի և նրա տարրերի) և չքանդովող միացումների (գամերի և գամային միացումների) մասին, պարզաբանվում են մեքենաշինության մեջ տարբեր պրոֆիլների պարուրակների օգտագործումը, պարուրակման անցքեր գալիկոնելու համար գալիկոնների ընտրությունը, գամման աշխատանքների տեսակներն ու դրանց իրականացման եղանակները, պարուրակ փորելու ժամանակ, ձեռքով գամում կատարելու ժամանակ առաջացող խտտանները, դրանց կանխումն ու անվտանգ աշխատանքի կանոնները: Ավարտելով այս մոդուլը՝ ուսանողը ձեռք կբերի ներքին և արտաքին պարուրակման, ինչպես նաև գամվածքային աշխատանքներ կատարելու կարողություններ:

Մոդուլի մակարդակը՝

1-ին

Մոդուլի տևողությունը՝

6 ժամ դասախոսություն,
28 ժամ գործնական պարապմունքներ:

Մոդուլի կրեդիտային արժեքը՝

« 1 »

Մուտքային պահանջները՝

Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է լիարժեքորեն տիրապետի «Երկրաչափություն» առարկային՝ միջնակարգ դպրոցի ծրագրի ծավալով և ուսումնասիրած լինի ԳՓ1-07-001, ԳՓ1-07-003 և ԳՓ1-07-007 մոդուլները:

Հատուկ պահանջներ՝

Չկան

Ուսումնառության արդյունքները՝

Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝

1. կատարի պարուրակի փորում՝
 - ա) ներպարուրակիչի միջոցով.
 - բ) արտապարուրակիչի միջոցով.
2. կատարի ձեռքով գամում և մեքենայացված գամում.

Գնահատման կարգը՝

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների լիարժեք ապահովումն է:

Կատարման (կատարողականության) չափանիշները, գնահատման միջոցները, մեթոդաբանությունը և ռեսուրսները, երաշխավորված ժամաքանակն ըստ մոդուլի ուսումնառության արդյունքների:

ԱՐԴՅՈՒՆՔ 1. Կատարել պարուրակի փորում ներպարուրակիչի և արտապարուրակիչի միջոցով:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

- ա. ճիշտ է բացատրում մեքենաշինության մեջ օգտագործվող պարուրակների տեսակները և դրանց տարբերությունները,
- բ. ճիշտ է բացատրում ներպարուրակիչի նշանակությունն ու կառուցվածքը,
- գ. Պարուրակման ենթակա անցքեր գայլիկոնելու համար ճիշտ է որոշում անհրաժեշտ գայլիկոնների տրամագծերը,
- դ. ճիշտ է բացատրում արտապարուրակիչի նշանակությունն ու կառուցվածքը,
- ե. Ճիշտ է իրականացնում պարուրակի փորումը ներպարուրակիչի միջոցով,
- զ. Ճիշտ է իրականացնում պարուրակի փորումը արտապարուրակիչի միջոցով,
- է. Ճիշտ է իրականացնում ձողի նախապատրաստումը՝ նրա վրա արտապարուրակիչով պարուրակ փորելու համար,
- ը. Ճիշտ է ընտրում և օգտագործում քայուղերը ներպարուրակիչով և արտապարուրակիչով պարուրակ փորելու համար:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՅԸ՝

Ուսանողին կտրամադրվեն մետաղյա մեքենամասերի (պողպատյա թերթավոր, շերտավոր կամ ձողավոր տեսքով շինվածքներ կամ թուջե չորսվակներ) հավաքածու դրանց վրա միջանցիկ կամ ոչ միջանցիկ անցքեր մշակելուց հետո ներպարուրակիչով կամ արտապարուրակիչով պարուրակ փորելու համար: Արդյունքի ձեռքբերումը հիմնված կլինի կատարման բոլոր չափանիշների վրա:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝

Արդյունքի ուսուցումը կատարվելու է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով, նպատակ ունենալով ուսանողի մոտ ձևավորել տարբեր եղանակներով պարուրակներ փորելու կարողություններ:

Ուսուցման ընթացքում օգտագործվելու են ներպարուրակիչի և արտապարուրակիչի միջոցով պարուրակներ փորելու վերաբերյալ դիդակտիկ նյութեր, անհրաժեշտ գործիքներ, պարագաներ և ուսումնական գրականություն:

ՈՒՍՈՒՅՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

Դասախոսություն՝	4 ժամ
Գործնական պարապմունքներ՝	18 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2. Կատարել ձեռքով գամում և մեքենայացված գամում:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

- ա. ճիշտ է բացատրում գամային միացումների նշանակությունը և պարզաբանում, թե ինչպե՞ս են գամերը դասակարգվում ըստ իրենց գլխիկի,

- բ. տիրապետում է գամելու տարբեր եղանակներին,
- գ. ճիշտ է օգտագործում գամելու համար նախատեսված գործիքները,
- դ. ճիշտ է հաշվարկում, թե ի՞նչ երկարություն պետք է ունենա գամի ձողիկի դուրս եկող ծայրը գլխիկ առաջացնելու համար և իրականացնում մեքենամասերի գամումը կիսակլոր և թաքնագլխիկ գամերով,
- ե. ճիշտ է օգտվում մեքենայացված գամելու համար նախատեսված գործիքներից,
- զ. ճիշտ է մեկնաբանում գամելու ժամանակ հնարավոր խոտանի առաջացման պատճառները և անվտանգ աշխատանքի հիմնական կանոնները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Ուսանողին կտրամադրվեն մետաղյա մեքենամասերի (պողպատյա թերթավոր կամ շերտավոր) հավաքածու դրանք գամելու համար: Արդյունքի ձեռքբերումը հիմնված կլինի կատարման բոլոր չափանիշների վրա:

ՍԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝

Արդյունքի ուսուցումը կատարվելու է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով, նպատակ ունենալով ուսանողի մոտ ձևավորել մեքենամասերը տարբեր եղանակներով գամելու կարողություններ:

Ուսուցման ընթացքում օգտագործվելու են մեքենամասերի գամելու եղանակների վերաբերյալ դիդակտիկ նյութեր և չափորոշիչներ, համապատասխան գործիքներ ու պարագաներ և ուսումնական գրականություն:

ՌԵՍՈՒՅՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

Դասախոսություն՝	2 ժամ
Գործնական պարապմունքներ՝	10 ժամ

4.3.22 ՍՈՂՈՒԼ 22. «ՆԵՐԻՆԱՐՏՈՑՈՒՄ ԵՎ ՀԱՐՍԱՐԱԿՑՈՒՄ, ՔԵՐԱՆՈՒՄ, ԿԻՊԱՀՂԿՈՒՄ»

Մոդուլի դասիչը՝

ԳՓ1-07-009

Մոդուլի նպատակը՝

Այս մոդուլը նախատեսված է «Գյուղատնտեսական մեքենաներ և սարքավորումներ վերանորոգող փականագործ» արհեստավորի պատրաստման համար: Մոդուլի շրջանակներում ուսումնասիրվում են՝ անցքերի ներխարտոցման, մեքենամասերը մեկը մյուսի հետ հարմարադրման ու հարմարակցման հարցեր, ընդհանուր հասկացողություններ քերանման և կիպահղկման մասին, պարզաբանվում են ներխարտոցման օրինակներ, քերանման ճշտությունը, կիպահղկիչների տեսակներն ու կիպահղկման ժամանակ օգտագործվող նյութերը, ներխարտոցելիս առաջացող խտանները, դրանց պատճառները և կանխման միջոցները, անվտանգ աշխատանքի կանոնները: Ավարտելով այս մոդուլը՝ ուսանողը ձեռք կբերի ներխարտոցման, քերանման ու կիպահղկման աշխատանքներ կատարելու կարողություններ:

Մոդուլի մակարդակը՝

1-ին

Մոդուլի տևողությունը՝

8 ժամ դասախոսություն,
26 ժամ գործնական պարապմունքներ:

Մոդուլի կրեդիտային արժեքը՝

« 1 »

Մուտքային պահանջները՝

Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է լիարժեքորեն տիրապետի «Երկրաչափություն» առարկային՝ միջնակարգ դպրոցի ծրագրի ծավալով և ուսումնասիրած լինի ԳՓ1-07-001, ԳՓ1-07-002, ԳՓ1-07-003 և ԳՓ1-07-006 մոդուլները:

Հատուկ պահանջներ՝

Չկան

Ուսումնառության արդյունքները՝

Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝

1. կատարի անցքերի ներխարտոցում.
2. կատարի մեքենամասերի հարմարադրում և հարմարակցում.
3. կատարի շինվածքի մակերևույթների քերանում.
4. կատարի կիպահղկման աշխատանքներ:

Գնահատման կարգը՝

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների լիարժեք ապահովումն է:

Կատարման (կատարողականության) չափանիշները, գնահատման միջոցները, մեթոդաբանությունը և ռեսուրսները, երաշխավորված ժամաքանակն ըստ մոդուլի ուսումնառության արդյունքների:

ԱՐԳՅՈՒՆՔ 1. Կատարել անցքերի ներխարտոցում:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

- ա. ճիշտ է բացատրում, թե ի՞նչ է ներխարտոցումը և ի՞նչ է այն տալիս,
- բ. ճիշտ է թվարկում անցքերի ներխարտոցման համար օգտագործվող հարմարանքները,
- գ. ճիշտ է իրականացնում կլոր, եռանիստ, քառակուսի և ուղղանկյունաձև անցքերի ներխարտոցումն ու դրանց ստուգումը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Ուսանողին կտրամադրվեն մետաղյա մեքենամասերի (պողպատյա թերթավոր և շերտավոր տեսքով շինվածքներ կամ թուջե չորսվակներ) հավաքածու դրանց վրա կլոր, եռանիստ, քառակուսի և ուղղանկյունաձև անցքեր ներխարտոցելու համար: Արդյունքի ձեռքբերումը հիմնված կլինի կատարման բոլոր չափանիշների վրա:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝

Արդյունքի ուսուցումը կատարվելու է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով, նպատակ ունենալով ուսանողի մոտ ձևավորել տարբեր եղանակներով անցքեր ներխարտոցելու կարողություններ:

Ուսուցման ընթացքում օգտագործվելու են ներխարտոցման և հարմարակցման վերաբերյալ դիդակտիկ նյութեր, անհրաժեշտ գործիքներ, պարագաներ և ուսումնական գրականություն:

ՌԵՍՈՒՅՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

Դասախոսություն՝	2 ժամ
Գործնական պարապմունքներ՝	6 ժամ

ԱՐԳՅՈՒՆԸ 2. Կատարել մեքենամասերի հարմարադրում և հարմարակցում:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

- ա. ճիշտ է բացատրում, թե ինչպե՞ս է կատարվում մեքենամասերի հարմարադրումը,
- բ. ճիշտ է պարզաբանում, թե ի՞նչ բան է բացվածքը և կոնտշաբլոնը,
- գ. ճիշտ է իրականացնում կիսափակ և փակ եզրագծերով մեքենամասերի հարմարակցումը,
- դ. ճիշտ է օգտվում մշակման չափիչներից և բացատրում դրանց նշանակությունը,
- ե. ճիշտ է բացատրում անցքերի ներխարտոցման ժամանակ առաջացող խտտանի տեսակներն ու դրանց կանխման միջոցները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Ուսանողին կտրամադրվեն մետաղյա մեքենամասերի (պողպատյա թերթավոր և շերտավոր տեսքով շինվածքներ կամ թուջե չորսվակներ) հավաքածու դրանց վրա կլոր, եռանիստ, քառակուսի և ուղղանկյունաձև բացվածքներ մշակելու և մյուս մեքենամասի հետ համակցելու համար: Արդյունքի ձեռքբերումը հիմնված կլինի կատարման բոլոր չափանիշների վրա:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝

Արդյունքի ուսուցումը կատարվելու է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով, նպատակ ունենալով ուսանողի մոտ ձևավորել տարբեր եղանակներով մեքենամասերի հարմարադրման և համակցման կարողություններ:

Ուսուցման ընթացքում օգտագործվելու են մեքենամասերի ներխարտոցման և հարմարակցման եղանակների վերաբերյալ դիդակտիկ նյութեր, համապատասխան գործիքներ ու պարագաներ և ուսումնական գրականություն:

ՈՒՍՈՒՅՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

Դասախոսություն՝	2 ժամ
Գործնական պարապմունքներ՝	6 ժամ

ԱՐԳՅՈՒՆՔ 3. Կատարել շինվածքի մակերևույթների քերանում:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

- ա. ճիշտ է բացատրում, թե ի՞նչ է քերանումը և ո՞ր դեպքերում է կիրառվում մեքենամասերի մշակման այս ձևը,
- բ. ճիշտ է թվարկում քերանների տեսակները և տիրապետում է դրանցով աշխատելու ունակություններին,
- գ. ճիշտ է օգտագործում քերանելիս օգտագործվող ստուգիչ գործիքները,
- դ. ճիշտ է նախապատրաստում մակերևույթները քերանման համար և մեկնաբանում, թե քերանելիս ինչպիսի՞ թողվածքներ են թողնվում և ինչու՞,
- ե. ճիշտ է մեկնաբանում, թե ի՞նչ նպատակով և ինպե՞ս են ներկվում քերանվող մակերևույթները,
- զ. ճիշտ է սրում և կարգաբերում քերանները ու բացատրում դրանց պահանջվող խնամքը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Ուսանողին կտրամադրվեն թուջե սալիկ, եռանիստ քանոն, առանցքակալի ներդիր կամ ներքին անկյունով պրիզմա՝ դրանք քերանելու համար: Արդյունքի ձեռքբերումը հիմնված կլինի կատարման բոլոր չափանիշների վրա:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝

Սովորողին կտրվեն մի շարք առաջադրանքներ՝ ճանապարհատրասպորտային պատահարների դեպքում հաճախակի հանդիպող վնասվածքների և այդ դեպքերի համար կիրառվող առաջին բուժօգնության մասին նրա գիտելիքները ստուգելու նպատակով: Կպահանջվի մանեկենի վրա ցուցադրել առաջին բուժօգնություն ցուցաբերելու գոյծողությունները: Արդյունքի ձեռքբերումը հիմնված կլինի սահմանված կատարման բոլոր չափանիշների վրա, որի համար ուսանողը պետք է կատարի բոլոր առաջադրանքները: Աշխատանքի կատարումը գրանցելու համար պետք է օգտագործել համապատասխան ստուգման թերթիկ:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՈՒՍՈՒՐՄԱՆԸ

Արդյունքի ուսուցումը կատարվելու է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով՝ նպատակ ունենալով ուսանողի մոտ ձևավորել առաջին բուժօգնություն ցուցաբերելու կարողություններ: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են մանեկեն, նույաժմեր, դիդակտիկ նյութեր և ուսումնական զրականություն

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

Դասախոսություն՝	6 ժամ
Գործնական պարապմունքներ՝	12 ժամ

4.3.28 **ՍՈՂՈՒԼ 28. «ՄԵՏԱՂԱՄՇԱԿՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ» (ՆԱԽԱՍԻՐԱԿԱՆ)**

Մոդուլի դասիչը՝

ԳՓ1-07-Ն-001

Մոդուլի նպատակը՝

Այս մոդուլը նախասիրական է և նախատեսված է «Գյուղատնտեսական մեքենաներ և սարքավորումներ վերանորոգող փականագործ» արհեստավորի պատրաստման համար: Մոդուլի շրջանակներում ուսումնասիրվում են՝ մետաղների սառը և տաք մշակման եղանակները, սև և գունավոր մետաղների արտադրությունը, լցաբաշխումը, բյուրեղացումը կիրառվող վառարանները և սարքավորումները, մետաղների մշակումը մետաղահատ հաստոցների վրա և այլն: Ավարտելով այս մոդուլը՝ ուսանողը կտիրապետի մետաղամշակման հիմունքներին, մետաղների մշակման տաք և սառը եղանակներին, կճանաչի խառատային և մետաղահատ այլ հաստոցները, կիրառվող սարքերին ու գործիքներին, ձեռք կբերի դրանցով աշխատելու կարողություններ:

Մոդուլի մակարդակը՝

1-ին

Մոդուլի տևողությունը՝

10 ժամ դասախոսություն,
26 ժամ գործնական պարապմունքներ:

Մոդուլի կրեդիտային արժեքը՝

« 1 »

Մուտքային պահանջները՝

Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է լիարժեքորեն տիրապետի «Քիմիա» առարկային՝ միջնակարգ դպրոցի ծրագրի ծավալով և ուսումնասիրած լինի ԳՓ1-07-001, ԳՓ1-07-002 և ԳՓ1-07-003 մոդուլները:

Հատուկ պահանջներ՝

Չկան

Ուսումնառության արդյունքները՝

Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝

1. կատարի մետաղների սառը և տաք մշակում ճնշմամբ և դեֆորմացմամբ.
2. կատարի մետաղների մշակում խառատային հաստոցի վրա.
3. կատարի մետաղների ռանդում, թրծում, ֆրեզում, ձգում, հղկում.

Գնահատման կարգը՝

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների լիարժեք ապահովումն է:

Կատարման (կատարողականության) չափանիշները, գնահատման միջոցները, մեթոդաբանությունը և ռեսուրսները, երաշխավորված ժամաքանակն ըստ մոդուլի ուսումնառության արդյունքների:

ԱՐԳՅՈՒՆՔ 1. Կատարել մետաղների սառը և տաք մշակում ճնշմամբ և դեֆորմացմամբ:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

ա. ճիշտ է բացատրում նախապատրաստվածքների տաքացման սարքավորումները և մեկնաբանում վառարանների դասակարգումը,

- բ. ճիշտ է իրականացնում մետաղների գլոցման, քարշման, կոման, մամլման, դրոշմման և ճնշմամբ մշակման այլ օպերացիաներ,
- գ. ճիշտ է օգտվում մետաղների գլոցման, քարշման, կոման, մամլման, դրոշմման դեպքում օգտագործվող գործիքներից, հարմարանքներից և սարքավորումներից,

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՅԸ՝

Ուսանողին կտրամադրվեն տարբեր նախապատրաստվածքներ՝ մետաղների գլոցման, քարշման, կոման, մամլման, դրոշմման համար: Արդյունքի ձեռքբերումը հիմնված կլինի կատարման բոլոր չափանիշների վրա:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝

Արդյունքի ուսուցումը կատարվելու է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով, նպատակ ունենալով ուսանողի մոտ ձևավորել մետաղների գլոցման, քարշման, կոման, մամլման, դրոշմման և այլ եղանակներով ճնշմամբ մշակման կարողություններ:

Ուսուցման ընթացքում օգտագործվելու են մետաղների գլոցմանը, քարշմանը, կոմանը, մամլմանը, դրոշմմանը և ճնշմամբ մշակման այլ եղանակներին վերաբերող դիդակտիկ նյութեր, անհրաժեշտ սարքավորումներ, գործիքներ ու պարագաներ և ուսումնական գրականություն:

ՈՒՍՈՒՅՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

Դասախոսություն՝	4 ժամ
Գործնական պարապմունքներ՝	10 ժամ

ԱՐԴՅՈՒՆ 2. Կատարել մետաղների մշակում խառատային հաստոցի վրա:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

- ա. ճիշտ է բացատրում խառատային կտրիչի երկրաչափական և կտրման տարրերը և պարզաբանում գործիքանյութերի դասակարգումը,
- բ. ճիշտ է մեկնաբանում մետաղների կտրման պրոցեսին ուղեկցող երևույթները (տաշեղագոյացում, ջերմագոյացում, մակաձ).
- գ. ճիշտ է ընտրում կտրման ռեժիմները՝ ապահովելով կտրման արագությունն ու գործիքի կայունությունը,

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՅԸ՝

Ուսանողին կտրամադրվեն տարբեր նախապատրաստվածքներ՝ խառատային հաստոցի վրա ըստ տրված զծագրի դրանց մշակման համար: Արդյունքի ձեռքբերումը հիմնված կլինի կատարման բոլոր չափանիշների վրա:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝

Արդյունքի ուսուցումը կատարվելու է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով, նպատակ ունենալով ուսանողի մոտ ձևավորել խառատային հաստոցի վրա մետաղների մշակման կարողություններ:

Ուսուցման ընթացքում օգտագործվելու են խառատային հաստոցի վրա մետաղների մշակման եղանակներին վերաբերող դիդակտիկ նյութեր, անհրաժեշտ սարքավորումներ, գործիքներ ու պարագաներ և ուսումնական գրականություն:

ՈՒՍՈՒՅՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

Դասախոսություն՝	2 ժամ
-----------------	-------

Գործնական պարապմունքներ՝

6 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3. Կատարել մետաղների ունդում, թրծում, ֆրեզում, ձգում, հղկում:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

- ա. ճիշտ է բացատրում մետաղահատ հաստոցների դասակարգումը,
- բ. ճիշտ է իրականացնում մետաղների մշակումը գայլիկոնիչ, ունդիչ, թործիչ, ձգիչ, ֆրեզիչ, հղկիչ հաստոցների վրա,
- դ. ճիշտ է օգտվում գայլիկոնիչ, ունդիչ, թործիչ, ձգիչ, ֆրեզիչ, հղկիչ հաստոցների վրա կիրառվող հարմարանքներից և գործիքներից,

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Ուսանողին կտրամադրվեն տարբեր նախապատրաստվածքներ՝ գայլիկոնիչ, ունդիչ, թործիչ, ձգիչ, ֆրեզիչ, հղկիչ հաստոցների վրա դրանց մշակման համար: Արդյունքի ձեռքբերումը հիմնված կլինի կատարման բոլոր չափանիշների վրա:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝

Արդյունքի ուսուցումը կատարվելու է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով, նպատակ ունենալով ուսանողի մոտ ձևավորել գայլիկոնիչ, ունդիչ, թործիչ, ձգիչ, ֆրեզիչ, հղկիչ հաստոցների վրա մետաղների մշակման կարողություններ:

Ուսուցման ընթացքում օգտագործվելու են գայլիկոնիչ, ունդիչ, թործիչ, ձգիչ, ֆրեզիչ, հղկիչ հաստոցների վրա մետաղների մշակմանը վերաբերող դիդակտիկ նյութեր, անհրաժեշտ սարքավորումներ, գործիքներ ու պարագաներ և ուսումնական գրականություն:

ՈՒՍՈՒՅՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

Դասախոսություն՝

4 ժամ

Գործնական պարապմունքներ՝

10 ժամ

4.3.29 **ՍՈՂՈՒԼ 29. «ԹՈՒՅԼՏՎԱԾՔՆԵՐ ԵՎ ՆՍՏԵՑՎԱԾՔՆԵՐ, ՉԱՓԻՉ ԳՈՐԾԻՔՆԵՐ ԵՎ ՉԱՓՈՒՆՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱՆ» (ՆԱԽԱՍԻՐԱԿԱՆ)**

Մոդուլի դասիչը՝

ԳՓ1-07-Ն-002

Մոդուլի նպատակը՝

Այս մոդուլը նախասիրական է և նախատեսված է «Գյուղատնտեսական մեքենաներ և սարքավորումներ վերանորոգող փականագործ» արհեստավորի պատրաստման համար: Մոդուլի շրջանակներում ուսումնասիրվում են՝ ընդհանուր հասկացողություններ մշակման ճշտության և դրա նշանակության, մշակված մակերևույթների մաքրության ու որակի, մեքենամասի նոմինակ, սահմանային և իրական չափերի, թույլտվածքների և նստեցվածքների, ճշտության դասերի, հիմնական չափագիտական հասկացությունների մասին, պարզաբանվում են մեքենաշինության մեջ օգտագործվող հիմնական չափիչ գործիքներն ու դրանցով չափումների իրականացման տեխնիկան: Ավարտելով այս մոդուլը՝ ուսանողը ձեռք կբերի հիմնական չափիչ գործիքներով աշխատելու կարողություն և կտիրապետի չափումների տեխնիկային:

Մոդուլի մակարդակը՝

1-ին

Մոդուլի տևողությունը՝

16 ժամ դասախոսություն,
22 ժամ գործնական պարապմունքներ:

Մոդուլի կրեդիտային արժեքը՝

« 1 »

Մուտքային պահանջները՝

Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է լիարժեքորեն տիրապետի «Երկրաչափություն» առարկային՝ միջնակարգ դպրոցի ծրագրի ծավալով և ուսումնասիրած լինի ԳՓ1-07-001, ԳՓ1-07-002 և ԳՓ1-07-Ն-001 մոդուլները:

Հատուկ պահանջներ՝

Չկան

Ուսումնառության արդյունքները՝

Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝

1. տարբերակի մեքենամասերի չափերի թույլտվածքների համակարգը, նստեցվածքները.
2. օգուվի թույլտվածքների աղյուսակներից.
3. տիրապետի չափումների տեխնիկային՝ արդյունավետ աշխատելով հիմնական չափիչ գործիքներով.

Գնահատման կարգը՝

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների լիարժեք ապահովումն է:

Կատարման (կատարողականության) չափանիշները, գնահատման միջոցները, մեթոդաբանությունը և ռեսուրսները, երաշխավորված ժամաքանակն ըստ մոդուլի ուսումնառության արդյունքների:

ԱՐԴՅՈՒՆՔ 1. Տարբերակել մեքենամասերի չափերի թույլտվածքների համակարգը, նստեցվածքները:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

- ա. ճիշտ է բացատրում մեքենամասերի մշակման ճշտությունը կանխորոշող պայմանները,
- բ. ճիշտ է բացատրում մշակվող մեքենամասերի մաքրությանը և որակին ներկայացվող հիմնական պահանջները,
- գ. ճիշտ է պարզաբանում մեքենամասերի համափոխարինելիության սկզբունքը,
- դ. ճիշտ է մեկնաբանում մեքենամասի նոմինալ, սահմանային և իրական չափերը :

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Ուսանողին կտրվեն հարցեր մեքենամասերի մշակման ճշտությունը պայմանավորող պայմանների, մշակման մաքրությանն ու որակին ներկայացվող պահանջների, մեքենամասերի համափոխարինելիության սկզբունքների, մշակման ժամանակ տրված չափերից հնարավոր շեղումների վերաբերյալ: Ուսանողից կպահանջվի հստակ պարզաբանել ու սահմանել մեքենամասերի մշակման ժամանակ տրված չափերից հնարավոր շեղումների պատճառները, արդյունքում՝ նոմինալ, սահմանային և իրական չափ հասկացությունների տարբերությունները, ձգվածք ու բացակ հասկացությունները: Արդյունքի ձեռքբերումը հիմնված կլինի կատարման բոլոր չափանիշների վրա:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝

Արդյունքի ուսուցումը կատարվելու է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով, նպատակ ունենալով ուսանողին տալ գիտելիքներ մեքենամասերի մշակման չափանիշների, համափոխարինելիության սկզբունքի, չափերի շեղումների վերաբերյալ:

Ուսուցման ընթացքում օգտագործվելու են մեքենամասերի համափոխարինելիությանը վերաբերող դիդակտիկ նյութեր և ուսումնական գրականություն:

ՌԻՍՈՒՅՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

Դասախոսություն՝	4 ժամ
Գործնական պարապմունքներ՝	2 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2. Օգտվել թույլտվածքների աղյուսակներից:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

- ա. ճիշտ է սահմանում թույլտվածք և նստեցվածք հասկացությունները, չափերի շեղումները (վերին, ներքին և իրական) և բացատրում ի՞նչ են բացակն ու ձգվածքը
- բ. ճիշտ է մեկնաբանում թույլտվածքների համակարգը և սահմանում վերջինս լիսեռի ու անցքի համակարգերի բաժանման հատկանիշները,
- գ. ճիշտ է թվարկում թույլտվածքների համակարգի ճշտության աստիճանները (կվալիտետները),
- դ. ճիշտ է օգտվում թույլտվածքների աղյուսակներից,

ե. ըստ տրված գծագրի կամ խնդրի պայմանի ճիշտ է հաշվարկում լիսեռի թույլտվածքը, անցքի թույլտվածքը և հնարավոր նվազագույն բացակը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Ուսանողին կտրամադրվեն թույլտվածքների և նստեցվածքների աղյուսակները, գծագիր կամ խնդիր՝ ըստ ելակետային տվյալների լիսեռի թույլտվածքը, անցքի թույլտվածքը և հնարավոր նվազագույն բացակը հաշվարկելու համար: Արդյունքի ձեռքբերումը հիմնված կլինի կատարման բոլոր չափանիշների վրա:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝

Արդյունքի ուսուցումը կատարվելու է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով, նպատակ ունենալով ուսանողի մոտ ձևավորել թույլտվածքների և նստեցվածքների աղյուսակներից օգտվելու և ըստ տրված գծագրի կամ խնդրի պայմանի՝ լիսեռի թույլտվածքը, անցքի թույլտվածքը և հնարավոր նվազագույն բացակը հաշվարկելու կարողություն:

Ուսուցման ընթացքում օգտագործվելու են թույլտվածքների և նստեցվածքների աղյուսակները և ուսումնական գրականություն:

ՌԻՍՈՒՅՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

Դասախոսություն՝	6 ժամ
Գործնական պարապմունքներ՝	8 ժամ

ԱՐԳՅՈՒՆ 3. Տիրապետել չափումների տեխնիկային՝ արդյունավետ աշխատելով հիմնական չափիչ գործիքներով:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

- ա. ճիշտ է բացատրում, թե ի՞նչ է նշանակում չափում և սահմանում օգտագործվող ժամանակակախից չափման միավորները,
- բ. ճիշտ է մեկնաբանում գոյություն ունեցող չափման մեթոդները և դրանց իրականացման եղանակները,
- գ. ճիշտ է բացատրում ձողակարկինի կառուցվածքը և դրանով իրականացնում է հանձնարարված չափումները,
- դ. ճիշտ է օգտվում միկրոմետրից և չափաձողից ու մեկնաբանում վերջիններիս չափելու ճշտությունը,
- ե. ճիշտ է օգտվում ունիվերսալ անկյունաչափից, կալիբրներից, բացակաչափից, շաբլոններից և պարուրակաչափերից:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Ուսանողին կտրամադրվեն տարբեր մեքենամասեր ձողակարկինի, միկրոմետրի, անկյունաչափի, բացակաչափի, շաբլոնների և պարուրակաչափերի միջոցով դրանց չափերը որոշելու և գծագրի վրա դրանք անցկացնելու համար: Արդյունքի ձեռքբերումը հիմնված կլինի կատարման բոլոր չափանիշների վրա:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝

Արդյունքի ուսուցումը կատարվելու է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով, նպատակ ունենալով ուսանողի մոտ ձևավորել ձողակարկինից, միկրոմետրից, անկյունաչափից, կալիբրներից, բացակաչափից, շաբլոններից և պարուրակաչափերից օգտվելու կարողություն:

Ուսուցման ընթացքում օգտագործվելու են մեքենամասեր, չափումների տեխնիկայի վերաբերյալ դիդակտիկ նյութեր, համապատասխան գործիքներ ու պարագաներ և ուսումնական գրականություն:

ՈՒՍՈՒՅՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

Դասախոսություն՝

6 ժամ

Գործնական պարապմունքներ՝

12 ժամ

**4.3.30 ՍՈՂՈՒԼ 30. «ԱՆԱԳՈՒՄ, ԶՈՂՈՒՄ ԵՎ ԱՌԱՆՑՔԱԿԱԼՆԵՐԻ ԼՅՈՒՄ»
(ՆԱԽԱՍԻՐԱԿԱՆ)**

Մոդուլի դասիչը՝

ԳՓ1-07-Ն-003

Մոդուլի նպատակը՝

Այս մոդուլը նախասիրական է և նախատեսված է «Գյուղատնտեսական մեքենաներ և սարքավորումներ վերանորոգող փականագործ» արհեստավորի պատրաստման համար: Մոդուլի շրջանակներում ուսումնասիրվում են՝ մետաղե մակերևույթների պաշտպանական պատումը անագով, ընդհանուր հասկացություններ զողման մասին, ծանոթանում են զողանյութերի և ֆլյուսների տեսակներին, զողման տարբեր տեսակներին, առանցքակալերի լցմանը, անագապատման և զողման ընթացքում անվտանգ աշխատանքի կանոններին: Ավարտելով այս մոդուլը՝ ուսանողը ձեռք կբերի անագապատման, զողման ու առանցքակալների լցման աշխատանքներ կատարելու կարողություններ:

Մոդուլի մակարդակը՝

1-ին

Մոդուլի տևողությունը՝

8 ժամ դասախոսություն,
28 ժամ գործնական պարապմունքներ:

Մոդուլի կրեդիտային արժեքը՝

« 1 »

Մուտքային պահանջները՝

Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է լիարժեքորեն տիրապետի «Քիմիա» առարկային՝ միջնակարգ դպրոցի ծրագրի ծավալով և ուսումնասիրած լինի ԳՓ1-07-002, ԳՓ1-07-003 և ԳՓ1-07-Ն-001 մոդուլները:

Հատուկ պահանջներ՝

Չկան

Ուսումնառության արդյունքները՝

Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝

1. կատարի անագում.
2. կատարի՝
 - (i) զողում փափուկ և կոշտ զողանյութերով,
 - (ii) ալյումինի զողում.
3. կատարի առանցքակալի լցում բարիտով:

Գնահատման կարգը՝

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների լիարժեք ապահովումն է:

Կատարման (կատարողականության) չափանիշները, գնահատման միջոցները, մեթոդաբանությունը և ռեսուրսները, երաշխավորված ժամաքանակն ըստ մոդուլի ուսումնառության արդյունքների:

ԱՐԴՅՈՒՆՔ 1. Կատարել անագում:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

- ա. ճիշտ է բացատրում, թե ի՞նչ է անագումը և ի՞նչ նպատակով են այն կիրառում,
- բ. ճիշտ է թվարկում է, թե ինչպիսի՞ նյութեր են օգտագործվում անագման շամանակ,
- գ. ճիշտ է շարադրում շինվածքի անագման համար նախապատրաստական աշխատանքների հերթականությունը (ճարպագրկում, խածատում և այլն), բացատրում, թե ինչպե՞ս պատրաստել թթվի ջրային լուծույթը և հիմնավորում անագելիս ցինկի քլորիդի օգտագործումը,
- դ. ճիշտ է իրականացնում անագապատումը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՅԸ՝

Ուսանողին կտրամադրվեն պողպատից, պղնձից, արույրից պատրաստված շինվածքներ դրանք տրորելով կամ սուզելու միջոցով անագելու համար: Արդյունքի ձեռքբերումը հիմնված կլինի կատարման բոլոր չափանիշների վրա:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝

Արդյունքի ուսուցումը կատարվելու է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով, նպատակ ունենալով ուսանողի մոտ ձևավորել տարբեր եղանակներով անագապատման կարողություններ:

Ուսուցման ընթացքում օգտագործվելու են անագման վերաբերյալ դիդակտիկ նյութեր, անհրաժեշտ գործիքներ, պարագաներ և ուսումնական գրականություն:

ՈՒՍՈՒՅՄԱՆ ԵՐԱՇԵՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

Դասախոսություն՝	2 ժամ
Գործնական պարապմունքներ՝	8 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2. Կատարել գոդում փափուկ և կոշտ գոդանյութերով, իրականացնել այլումինի գոդում:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

- ա. ճիշտ է բացատրում, թե ի՞նչ է գոդումը և ո՞րն է գոդման նշանակությունը,
- բ. ճիշտ է պարզաբանում, թե ի՞նչ տարբերություն կա գոդանյութերի և ֆլյուսների միջև,
- գ. ճիշտ է թվարկում, թե ինչպիսի՞ գործիքներ և սարքեր են օգտագործվում գոդելիս,
- դ. ճիշտ է նախապատրաստում շինվածքները գոդման համար,
- ե. ճիշտ է իրականացնում փափուկ գոդանյութերով գոդելու օպերացիան,
- զ. ճիշտ է իրականացնում կոշտ գոդանյութերով գոդելու օպերացիան.
- է. ճիշտ է իրականացնում այլումինե մակերևույթների գոդելու օպերացիան:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՅԸ՝

Ուսանողին կտրամադրվեն մետաղյա մեքենամասերի հավաքածու դրանք տարբեր գոդանյութերով միմյանց գոդելու համար: Արդյունքի ձեռքբերումը հիմնված կլինի կատարման բոլոր չափանիշների վրա:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝

Արդյունքի ուսուցումը կատարվելու է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով, նպատակ ունենալով ուսանողի մոտ ձևավորել փափուկ և կոշտ գոդանյութերով մեքենամասերը միմյանց գոդելու կարողություն:

Ուսուցման ընթացքում օգտագործվելու են մեքենամասերի գոդման վերաբերյալ դիդակտիկ նյութեր, համապատասխան գործիքներ ու պարագաներ և ուսումնական գրականություն:

ՈՒՍՈՒՅՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

Դասախոսություն՝	4 ժամ
Գործնական պարապմունքներ՝	10 ժամ

ԱՐԳՅՈՒՆՔ 3. Կատարել առանցքակալի լցում բաբիտով:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

- ա. ճիշտ է բացատրում ճարպագրկման, խաճատման օպերացիաները, դրանց նշանակությունը,
- բ. ճիշտ է բացատրում առանցքակալների ներդիրները անագելու պրոցեսը՝ հետագայում դրանք բաբիտ լցնելու համար,
- բ. ճիշտ է իրականացնում բաբիտի հալումը և առանցքակալների լցումը,
- գ. ճիշտ է իրականացնում բանեցված բաբիտի հալումը,
- դ. ճիշտ է որոշում առանցքակալի լցվածքի որակը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՅԸ՝

Ուսանողին կտրամադրվեն թուջե, պողպատե կամ բրոնզե ներդիրներ՝ դրանց ներքին մակերևույթները անագելու և բաբիտ լցնելու համար: Արդյունքի ձեռքբերումը հիմնված կլինի կատարման բոլոր չափանիշների վրա:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝

Արդյունքի ուսուցումը կատարվելու է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով, նպատակ ունենալով ուսանողի մոտ ձևավորել բաբիտով առանցքակալների լցման կարողություն:

Ուսուցման ընթացքում օգտագործվելու են բաբիտով առանցքակալների լցման վերաբերյալ դիդակտիկ նյութեր, համապատասխան գործիքներ ու պարագաներ և ուսումնական գրականություն:

ՈՒՍՈՒՅՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

Դասախոսություն՝	2 ժամ
Գործնական պարապմունքներ՝	10 ժամ

4.3.31 ՄՈԴՈՒԼ 31. «ՄԱՇՎԱԾ ՄԵՔԵՆԱՄԱՍԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ» (ՆԱԽԱՄԻՐԱԿԱՆ)

Մոդուլի դասիչը՝

ԳՓ1-07-004

Մոդուլի նպատակը՝

Այս մոդուլը նախասիրական է և նախատեսված է «Գյուղատնտեսական մեքենաներ և սարքավորումներ վերանորոգող փականագործ» արհեստավորի պատրաստման համար: Մոդուլի շրջանակներում ուսումնասիրվում են՝ ընդհանուր հասկացություններ մեքենաների մեքենամասերի վերականգնման եղանակների (եռակցման, հալապատման, պլաստիկ դեֆորմացիայի, մեխանիկական մշակման և այլն), օգտագործվող նյութերի ու գործիքների հարցեր: Ավարտելով այս մոդուլը ուսանողը ձեռք կբերի մեքենաների՝ մեքենամասերի տարբեր եղանակներով վերականգնման և կիրառվող սարքերով ու գործիքներով աշխատելու կարողություններ:

Մոդուլի մակարդակը՝

1-ին

Մոդուլի տևողությունը՝

12 ժամ դասախոսություն,
42 ժամ գործնական պարապմունքներ:

Մոդուլի կրեդիտային արժեքը՝

« 1,5 »

Մուտքային պահանջները՝

Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է լիարժեքորեն տիրապետի «Քիմիա» առարկային՝ միջնակարգ դպրոցի ծրագրի ծավալով և ուսումնասիրած լինի ԳՓ1-07-003, ԳՓ1-07-004, ԳՓ1-07-013 և ԳՓ1-07-Ն-001 մոդուլները:

Հատուկ պահանջներ՝

Չկան

Ուսումնառության արդյունքները՝

Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝

1. կատարի մեքենամասերի վերականգնում եռակցման և հալապատման միջոցով.
2. կատարի մեքենամասերի վերականգնում պոլիմերային նյութերի կիրառմամբ.
3. կատարի մեքենամասերի վերականգնում էլեկտրոլիտային կցանման կիրառմամբ.
4. կատարի մեքենամասերի վերականգնում պլաստիկ դեֆորմացիայի միջոցով.
5. կատարի մեքենամասերի նորոգում և վերականգնում մեխանիկական մշակման միջոցով.

Գնահատման կարգը՝

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների լիարժեք ապահովումն է:

Կատարման (կատարողականության) չափանիշները, գնահատման միջոցները, մեթոդաբանությունը և ռեսուրսները, երաշխավորված ժամաքանակն ըստ մոդուլի ուսումնառության արդյունքների:

ԱՐԴՅՈՒՆԸ 1. Կատարել մեքենամասերի վերականգնում եռակցման և հալապատման միջոցով:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

- ա. ճիշտ է բացատրում միացությունների վերականգնման (նստեցվածքների, մեքենամասերի միացման կոշտության, հավաքական հանգույցների և մեքենամասերի փոխադարձ դիրքերի ճշգրտության վերականգնում և այլն) և մեքենամասերի վերականգնման եղանակների դասակարգումը,
- բ. ճիշտ է շարադրում պողպատյա մեքենամասերի վերականգնման նպատակով էլեկտրական և գազային եռակցման ու հալապատման կիրառությունը,
- գ. ճիշտ է օգտվում եռակցման և հալապատման դեպքում օգտագործվող էլեկտրոդներից և հավելանյութերից,
- դ. ճիշտ է իրականացնում թուջե, ալյումինե, պողպատյա մեքենամասերի եռակցումն ու հալապատումը,
- զ. մեքենամասերը եռակցելիս կամ հալապատելիս ճիշտ է պայքարում դեֆորմացիայի դեմ.

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Ուսանողին կտրամադրվեն տրակտորի կամ որևէ գյուղատնտեսական մեքենայի անսարքության հետևանքով շահագործումից դուրս եկած և վերականգնման ենթակա մեքենամասեր՝ եռակցման կամ հալապատման եղանակով դրանց վերականգնման համար: Արդյունքի ձեռքբերումը հիմնված կլինի կատարման բոլոր չափանիշների վրա:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝

Արդյունքի ուսուցումը կատարվելու է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով՝ նպատակ ունենալով ուսանողի մոտ ձևավորել եռակցման և հալապատման եղանակներով մեքենաների և դրանց հանգույցների մեքենամասերի վերականգնման կարողություններ:

Ուսուցման ընթացքում օգտագործվելու են եռակցման և հալապատման եղանակներով մեքենամասերի վերականգնմանը վերաբերող դիդակտիկ նյութեր, անհրաժեշտ սարքավորումներ, գործիքներ ու պարագաներ և ուսումնական գրականություն:

ՈՒՍՈՒՅՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

Դասախոսություն՝	4 ժամ
Գործնական պարապմունքներ՝	12 ժամ

ԱՐԴՅՈՒՆԸ 2. Կատարել մեքենամասերի վերականգնում պոլիմերային նյութերի կիրառմամբ:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

- ա. ճիշտ է բացատրում մեքենամասերի նորոգման դեպքերում պոլիմերային նյութերի կիրառման ոլորտները,
- բ. ճիշտ է թվարկում կիրառվող սինթետիկ սոսինձները,
- գ. սինթետիկ սոսինձների միջոցով ճիշտ է վերացնում ճաքերն ու ջարդվածքները,
- դ. ճիշտ է իրականացնում պլաստմասաների եռակցումը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Ուսանողին կտրամադրվեն տրակտորի կամ որևէ գյուղատնտեսական մեքենայի անսարքության հետևանքով շահագործումից դուրս եկած և վերականգնման ենթակա մեքենամասեր՝ պոլիմերային նյութերի միջոցով դրանց վերականգնման համար: Արդյունքի ձեռքբերումը հիմնված կլինի կատարման բոլոր չափանիշների վրա:

ՍԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝

Արդյունքի ուսուցումը կատարվելու է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով՝ նպատակ ունենալով ուսանողի մոտ ձևավորել պոլիմերային նյութերի կիրառմամբ մեքենաների և դրանց հանգույցների մեքենամասերի վերականգնման կարողություններ:

Ուսուցման ընթացքում օգտագործվելու են պոլիմերային նյութերով մեքենամասերի վերականգնմանը վերաբերող դիդակտիկ նյութեր, անհրաժեշտ սարքավորումներ, գործիքներ, նյութեր ու պարագաներ, ուսումնական գրականություն:

ՈՒՍՈՒՅՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

Դասախոսություն՝	2 ժամ
Գործնական պարապմունքներ՝	8 ժամ

ԱՐԳՅՈՒՆ 3. Կատարել մեքենամասերի վերականգնում էլեկտրոլիտային կցանման կիրառմամբ:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

- ա. ճիշտ է բացատրում մեքենամասերի վերականգնման էլեկտրոլիտային կցանման եղանակները,
- բ. մեքենամասերը ճիշտ է նախապատրաստում էլեկտրոլիտային կցանման համար,
- դ. ճիշտ է իրականացնում քրոմապատումն ու պողպատապատումը,

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Ուսանողին կտրամադրվեն տրակտորի կամ որևէ գյուղատնտեսական մեքենայի անսարքության հետևանքով շահագործումից դուրս եկած և վերականգնման ենթակա մեքենամասեր՝ էլեկտրոլիտային կցանման միջոցով դրանց վերականգնման համար: Արդյունքի ձեռքբերումը հիմնված կլինի կատարման բոլոր չափանիշների վրա:

ՍԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝

Արդյունքի ուսուցումը կատարվելու է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով՝ նպատակ ունենալով ուսանողի մոտ ձևավորել էլեկտրոլիտային կցանման կիրառմամբ մեքենաների և դրանց հանգույցների մեքենամասերի վերականգնման կարողություններ:

Ուսուցման ընթացքում օգտագործվելու են էլեկտրոլիտային կցանմամբ մեքենամասերի վերականգնմանը վերաբերող դիդակտիկ նյութեր, անհրաժեշտ սարքավորումներ, գործիքներ ու պարագաներ և ուսումնական գրականություն:

ՈՒՍՈՒՅՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

Դասախոսություն՝	2 ժամ
Գործնական պարապմունքներ՝	6 ժամ

ԱՐԳՅՈՒՆՔ 4. Կատարել մեքենամասերի վերականգնում պլաստիկ դեֆորմացիայի միջոցով:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

- ա. ճիշտ է իրականացնում մեքենամասերի ուղղումը,
- բ. ճիշտ է իրականացնում մեքենամասերի չափերի վերականգնումը նստեցման, շրջասեղմման, ներճնշման, գլանաքերթման և ձգման միջոցով,
- գ. ճիշտ է իրականացնում մեքենամասերի մեխանիկական հատկությունների վերականգնումը պլաստիկ դեֆորմացիայի միջոցով:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Ուսանողին կտրամադրվեն տրակտորի կամ որևէ գյուղատնտեսական մեքենայի անսարքույթ-յան հետևանքով շահագործումից դուրս եկած և վերականգնման ենթակա մեքենամասեր՝ պլաստիկ դեֆորմացիայի միջոցով դրանց վերականգնման համար: Արդյունքի ձեռքբերումը հիմնված կլինի կատարման բոլոր չափանիշների վրա:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝

Արդյունքի ուսուցումը կատարվելու է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով՝ նպատակ ունենալով ուսանողի մոտ ձևավորել պլաստիկ դեֆորմացիայի կիրառմամբ մեքենաների և դրանց հանգույցների մեքենամասերի վերականգնման կարողություններ:

Ուսուցման ընթացքում օգտագործվելու են նստեցման, շրջասեղմման, ներճնշման, գլանաքերթման և ձգման միջոցով մեքենամասերի չափերի վերականգնմանը վերաբերող դիդակտիկ նյութեր, անհրաժեշտ սարքավորումներ, գործիքներ ու պարագաներ և ուսումնական գրականություն:

ՈՒՍՈՒՅՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

Դասախոսություն՝	2 ժամ
Գործնական պարապմունքներ՝	8 ժամ

ԱՐԳՅՈՒՆՔ 5. Կատարել մեքենամասերի նորոգում և վերականգնում մեխանիկական մշակման միջոցով:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

- ա. ճիշտ է բացատրում մեքենամասերի նորոգման և վերականգնման ժամանակ մեքենամասերի մեխանիկական մշակման ոլորտներն ու առանձնահատկությունները,
- բ. մեքենամասերի մեխանիկական մշակման համար ճիշտ է ընտրում խառատային և գալիկոնման հաստոցների հարմարանքները՝ ապահովելով տեղակայման ճշգրիտ բազաները,
- գ. տարբեր մեխանիկական մշակումների դեպքում ճիշտ է ընտրում կտրման ռեժիմները,
- դ. ճիշտ է իրականացնում պարուրակային մակերևույթների վերականգնումն ու նորոգումը,
- ե. ճիշտ է իրականացնում հանգույցների և հավաքական միավորների իրանների ճաքերի նորոգումն ու վերացումը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Ուսանողին կտրամադրվեն տրակտորի կամ որևէ գյուղատնտեսական մեքենայի անսարքույթ-յան հետևանքով շահագործումից դուրս եկած և վերականգնման ենթակա մեքենամասեր՝ նորոգման և վերականգնման մեխանիկական մշակման միջոցով դրանց վերականգնման համար: Արդյունքի ձեռքբերումը հիմնված կլինի կատարման բոլոր չափանիշների վրա:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝

Արդյունքի ուսուցումը կատարվելու է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով՝ նպատակ ունենալով ուսանողին ծանոթացնել նորոգման և վերականգնման մեխանիկական մշակման կիրառմամբ մեքենաների և դրանց հանգույցների մեքենամասերի վերականգնման կարողություններ:

Ուսուցման ընթացքում օգտագործվելու են նորոգման և վերականգնման մեխանիկական մշակման միջոցով մեքենամասերի չափերի վերականգնմանը վերաբերող դիդակտիկ նյութեր, անհրաժեշտ սարքավորումներ, գործիքներ ու պարագաներ և ուսումնական գրականություն:

ՈՒՍՈՒՅՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

Դասախոսություն՝	2 ժամ
Գործնական պարապմունքներ՝	8 ժամ

5. ՊԱՀԱՆՋՆԵՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՈՒ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ

5.1. Ընդհանուր դրույթներ

Ուսումնական գործընթացի կազմակերպման և բովանդակային ապահովվածության վերաբերյալ մշակվում են չափորոշիչներ և ներկայացվում համապատասխան ընդհանուր պահանջներ.

- լսարանային ֆոնդի,
- ուսումնական շենքի առկայության,
- գրադարանով, ընթերցասրահներով ապահովվածության,
- ուսուցման նոր ձևերի ու մեթոդների ներդրման,
- ուսումնական-հետազոտական գործընթացի,
- ուսումնական հաստատության (մասնագիտության) ֆինանսական ապահովվածության, սոցիալ-կենցաղային պայմանների վերաբերյալ:

5.2. Ընդունելության գործընթացի կազմակերպման պայմաններ

5.2.1. «Գյուղատնտեսական մեքենաներ և սարքավորումներ վերանորոգող փականագործ» որակավորմամբ մասնագետի պատրաստման կրթական ծրագրով ընդունելությունը կատարվում է միջնակարգ (ըրիվ) ընդհանուր կրթության հիմքով:

5.2.2. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրեր իրականացնող կազմակերպությունն իրավունք ունի «Գյուղատնտեսական մեքենաներ և սարքավորումներ վերանորոգող փականագործ» որակավորմամբ մասնագետի պատրաստման ընդունելություն կատարել միայն համապատասխան լիցենզիայի (կրթական գործունեության թույլտվություն) առկայության դեպքում:

5.2.3. Ընդունելությունը կատարվում է մատչելիության, հրապարակայնության, արդարության, վստահելիության, թափանցիկության, հավասարության սկզբունքների կիրառմամբ:

5.3. Ուսումնական գործընթացի կազմակերպման պայմաններ

5.3.1. Կադրային ապահովություն և կադրային համապատասխանություն

Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրեր իրականացնող կազմակերպություններում նախատեսվում են մանկավարժական, վարչատնտեսական, արտադրական, ուսումնաօժանդակ և այլ անձնակազմեր:

Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրեր իրականացնող կազմակերպությունների մանկավարժական կազմում ընդգրկվում են **դասախոսները, արտադրական ուսուցման վարպետները:**

Մանկավարժական աշխատողների տարակարգերին և պաշտոններին ներկայացվող պահանջները, մրցույթների կազմակերպման և անցկացման, վերապատրաստման և ատեստավորման կարգերը հաստատում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը՝ ՀՀ կրթության և գիտության նախարարությունը:

5.3.2. Ուսումնամեթոդական ապահովություն

Մասնագիտության կրթական հիմնական ծրագրի իրականացումը պետք է ապահովված լինի ուսանողի համար մատչելի տեղեկատվական նյութերով (գրադարանային ֆոնդ, տվյալների համակարգչային բազա և այլն), ինչն, ըստ բովանդակության, պետք է համապատասխանի մասնագիտության ուսումնական պլանով նախատեսված առարկաների լրիվ ցանկին: Այդ առարկաների, ինչպես նաև ուսումնական գործընթացի կազմակերպման բոլոր ձևերի գծով (տեսական, գործնական պարապմունքների, ուսումնական, արտադրական և նախաավարտական պրակտիկաների, կուրսային աշխատանքների և այլն) պետք է առկա լինեն համապատասխան դասագրքեր, ուսումնամեթոդական, մեթոդական ձեռնարկներ, ուղեցույցներ (գործնական պարապմունքների, ինքնուրույն արտալսարանային աշխատանքների կազմակերպման համար), գործնական խաղերի սցենարներ (դերային խաղեր), թեստային հանձնարարականների հավաքածուներ, ալգորիթմներ, մեթոդական մշակումներ, ցուցումներ, երաշխավորություններ, դիտողական նյութեր, ուսուցման տեխնիկական միջոցներ (ուսումնադիտողական, լսատեսողական նյութեր դասավանդվող բոլոր առարկաների և բոլոր տեսակի պարապմունքների վերաբերյալ՝ ուսանողների և դասախոսների համար), ինչպես նաև միջանկյալ և ամփոփիչ ատեստավորման նյութեր:

5.3.3. Նյութատեխնիկական ապահովություն (կաբինետների, լաբորատորիաների, արհեստանոցների, ուսումնական, ուսումնաօժանդակ և օժանդակ ստորաբաժանումների, նյութերի ու պարագաների երաշխավորված ցանկ)

Մասնագիտության կրթական ծրագիրն իրականացնող կազմակերպությունը (ուսումնական հաստատությունը) պետք է ունենա այնպիսի նյութատեխնիկական բազա, որն ապահովի մասնագիտության լիարժեք ուսուցման նկատմամբ պետական պահանջները՝ ըստ գործող պետական կրթական չափորոշիչների, կաբինետների և լաբորատորիաների հագեցվածության ցանկի և սանիտարահիգիենիկ ու հակահրդեհային պահանջների:

Երաշխավորված ցանկ

Կաբինետներ՝

- Տրակտորների ներքին այրման շարժիչների,
- Տրակտորների տրանսմիսիայի և ընթացքային մասի,
- Գյուղատնտեսական մեքենաների,
- Աշխատանքի կազմակերպման,
- Ճարտարագիտական գրաֆիկայի,
- Նյութագիտության,
- Կենսագործունեության անվտանգության և բնապահպանության,
- Տեղեկատվական տեխնոլոգիաների,
- Տրակտորների տեխնիկական ախտորոշման,
- Հանրակրթական⁶, ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական, մաթեմատիկական և ընդհանուր բնագիտական առարկաների՝ ըստ պետական ընդհանուր չափորոշիչի պահանջների⁷:

Լաբորատորիաներ՝

- Մետաղամշակման,
- Էլեկտրատեխնիկայի:

⁶ հիմնական ընդհանուր կրթության հիմքի վրա ուսուցում կազմակերպելու դեպքում:

⁷ մինչև նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության պետական ընդհանուր չափորոշիչի ընդունումը ղեկավարվել միջին մասնագիտական կրթության պետական ընդհանուր չափորոշիչի պահանջներով:

Արհեստանոցներ`

- Սետադամշակման,
- Չափանշման:

Տրակտորարշավարան

Մարզական համալիր`

- Մարզադահլիճ,
- Մարզահրապարակ:

Այլ օժանդակ ծառայություններ`

- Ճաշարան (բուֆետ),
- Բուժկետ:

Կրթական ծրագիր իրականացնող կազմակերպությունը, ելնելով անհրաժեշտությունից, կարող է ձևավորել լրացուցիչ կաբինետներ, լաբորատորիաներ, արհեստանոցներ և այլն:

5.3.4. Ուսումնական գործընթացի կազմակերպման ընդհանուր նորմատիվներ (ուսումնական պլան)

- Ուսանողի ուսումնական բեռնվածության առավելագույն ծավալը չպետք է գերանցանցի 54 ժամը` ներառյալ լսարանային և արտալսարանային ուսումնական աշխատանքի բոլոր տեսակները,
- Ուսումնառության ընթացքում ուսանողի բեռնվածությունը պարտադիր ուսումնական պարապմունքներով չպետք է գերազանցի 36 ժամը, ընդ որում` նշված ծավալը չի ներառում նախասիրական առարկաների պարապմունքները, խորհրդատվությունները և լրացուցիչ արտալսարանային պարապմունքները:
- Ուսումնական տարվա սկիզբը և ավարտը բոլոր կուրսերում որոշվում է մասնագիտության չափորոշչով:
- Հաստատության ուսումնական գործունեությունը կարգավորվում է ուսումնական պլաններով, առարկայական ծրագրերով, ուսումնական գործընթացի ժամանակացույցով և դասացուցակներով:
- Հաստատությունում ուսումնական պարապմունքներն իրականացվում են խմբերով, ենթախմբերով, հոսքերով, անհատական` հետևյալ հիմնական ձևերով`
 - դաս,
 - դասախոսություն,
 - սեմինար,
 - գործնական աշխատանք,
 - լաբորատոր աշխատանք,
 - ստուգողական աշխատանք,
 - անհատական աշխատանք,
 - ինքնուրույն աշխատանք,
 - խորհրդատվություն,
 - պրակտիկա,
 - կուրսային նախագծում (կուրսային աշխատանք),
 - դիպլոմային նախագծում (դիպլոմային աշխատանք):

➤ Առկա ուսուցմամբ ուսանողների համար սահմանվում են արձակուրդներ տարեկան առնվազն երկու անգամ՝ 8-11 շաբաթ ընդհանուր տևողությամբ, այդ թվում 2 շաբաթից ոչ պակաս ձմռան ժամանակահատվածում: Սեզոնային աշխատանքների հետ կապված մասնագիտությունների գծով կարող են սահմանվել արձակուրդների այլ ժամկետներ՝ պահպանելով դրանց ընդհանուր տևողությունը:

➤ Սահմանվում են խորհրդատվության ժամեր յուրաքանչյուր ուսումնական տարում 100 ժամ՝ մեկ ուսումնական խմբի համար: Խորհրդատվության ժամերը և անցկացման ձևերը (խմբային, անհատական, գրավոր, բանավոր և այլն) որոշում է ուսումնական հաստատությունը:

➤ Նախասիրական առարկաների ցանկը, դրանց ծավալը և ուսուցման ժամկետները (ոչ ավել, քան շաբաթական 4 ժամ՝ առանձին դասացուցակով) որոշվում է ուսանողների ընտրությամբ: Ընտրությունն իրականացնելիս պետք է հաշվի առնել ՀՀ կառավարության 2001թ. հունվարի 16-ի N 24 որոշմամբ հաստատված միջին մասնագիտական կրթության պետական ընդհանուր չափորոշիչի 12-րդ կետի պահանջները՝ «...շրջանավարտի ազգային ու համաշխարհային պատմության և մշակույթի որոշակի իմացության» նկատմամբ:

➤ Ուսումնական հաստատության կողմից կարող է առաջարկվել ուսանողի անձնական պահանջմունքների և մասնագիտական հետաքրքրությունների բավարարմանն ուղղված ընտրովի առարկաներ:

5.4. Պրակտիկաների կազմակերպման պահանջներ

Պրակտիկաները կազմակերպվում և անցկացվում են «Պրակտիկաների կազմակերպման և անցկացման կարգի» պահանջներին համապատասխան, որը մշակվում և հաստատվում է ուսումնական հաստատության կողմից:

Պրակտիկաների բոլոր փուլերի բովանդակությունը սահմանվում է պրակտիկայի օրինակելի միասնական ծրագրով:

Արտադրական պրակտիկայի տեղերի բացակայության դեպքում ուսումնական հաստատությունը պրակտիկան կազմակերպում է սեփական նյութատեխնիկական բազայի վրա, եթե այն հագեցած է ժամանակակից սարքավորումներով և ծրագրային միջոցներով:

Ուսանողների ուսումնական պրակտիկան մասնագիտության հետ կապված անցկացվում է արտադրական ուսուցման վարպետների կողմից ուսումնական և ուսումնաարտադրական արհեստանոցներում, ուսումնական տնտեսություններում, ուսումնափորձական տեղամասերում, ուսումնական հաստատության այլ ուսումնաօժանդակ օբյեկտներում, ինչպես նաև արտադրական ձեռնարկություններում, հաստատություններում և կազմակերպություններում:

Բանվորական կարգի ձեռքբերման պրակտիկան անցկացվում է համապատասխան բանվորական որակավորման կարգ շնորհելու նպատակով:

Բանվորական որակավորման ատեստավորման ժամկետները որոշվում են ուսումնական հաստատության կողմից և նշվում են մասնագիտության ուսումնական պլանում:

Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության որակավորումների տարակարգերը արտահայտված են նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության մասնագիտությունների ցանկում, որը հաստատված է ՀՀ կառավարության 2006թ. հունվարի 12-ի N 73-Ն որոշման N1 հավելվածով:

Բանվորական և որակավորման տարակարգերը արտահայտվում (գրառվում) են արհեստագործի ավարտական փաստաթղթում՝ դիպլոմում, դրա ներդիրում և որակավորման վկայականում:

5.5. Միջանկյալ և ամփոփիչ ատեստավորման պահանջներ

Ատեստավորման՝ ուսանողների գիտելիքների վերահսկման նկատմամբ պահանջներն իրականացվում են գործող կանոնակարգի համաձայն:

Այն իրականացվում է՝ ստուգելու համար ուսանողների պատրաստվածության մակարդակի և որակի համապատասխանությունը պետական կրթական չափորոշիչների պահանջներին:

Նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատություններում գործում են միջանկյալ և ամփոփիչ ատեստավորման հետևյալ ձևերը.

- քննություն,
- ստուգարք,
- տարբերակված ստուգարք,
- կուրսային նախագիծ (աշխատանք),
- ստուգողական աշխատանք, այդ թվում տնօրինության կողմից հանձնարարվող վերահսկիչ ստուգողական աշխատանք,
- կրեդիտային, ստուգարքային միավորների համակարգ:

Միջազգային մասնագիտական կրթական համակարգին ինտեգրվելու և ուսանողների ակադեմիական շարժունակությունն ապահովելու նպատակով՝ ուսումնական գործընթացում գերադասելի է կրեդիտային համակարգի, ինչպես նաև մոդուլային ուսուցման ներդրումը:

6. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Ուսումնական հաստատությանն իրավունք է վերապահվում՝

- Մինչև 5% չափով փոփոխելու առարկայախմբերի ժամաքանակը,
- Փոփոխել առանձին առարկաների ծրագրային նյութի բովանդակությունը 15%-ի սահմաններում,
- Մահմանել միջանկյալ ատեստավորման անցկացման ձևերը,
- Մահմանել ուսումնական բեռնվածության (լսարանային և արտալսարանային) ընդհանուր ծավալը յուրաքանչյուր առարկայից,
- Ընտրովի առարկաները սահմանել այնպես, որ դրանք նպաստեն շրջանավարտի մրցունակության ապահովմանը առնվազն տարածաշրջանային աշխատաշուկայում,
- Կամընտրական (ֆակուլտատիվ) առարկաների ցանկը և դրանց բովանդակությունը ձևավորել ուսանողների նախասիրություններին համապատասխան,
- Ընտրել սույն չափորոշչով նախատեսված շրջանավարտների պետական ամփոփիչ ատեստավորման տարբերակներից որևէ մեկը և ժամանակը (բայց ոչ պակաս, քան 2 շաբաթ),
- Մասնագետների պատրաստման գործում հաշվի առնել տարածաշրջանային առանձնահատկությունները և արտացոլել դրանք (ինչպես պետական պահանջներով, այնպես էլ ինքնուրույնաբար սահմանած) առարկաների աշխատանքային ծրագրերում,
- Մասնագիտության գծով արտադրության մեջ աշխատող մասնագետների համար կազմակերպել կարճաժամկետ ուսուցում, վերաորակավորման դասընթացներ, որի տևողությունը և բովանդակությունը հաստատում է պետական կառավարման լիազորված մարմինը: